

LESTER WOODS




1944



Ռ-Յ Դ, Գ
Ե.Տ.Բ.Բ

Համար չորրորդ և Հինգերորդ
ապրիլ-մայիս



Ս. ԷԶՄԻԼՅՆԻ



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ	5
Պատահական	3
2. ԱժԷՆՎՅՆ Հայոց Հայրապետութեան Տ. Տեղակալի անորինութիւններից	5
Հայոց Եկեղեցի	7
3. Մայր Աթոս	7
Առաջ եկեղեցի	9
4. Պատրիարք Սեբեդ	8
5. Միտրոպոլիտ Ալեքսիի նամակը ժող. Կոմիտ. Սովետի նախագահ Ի. Վ. ՍՏԱՎՆԻՆ 11	11
Հայրենական պատերազմի նակատում	13
6. ՀՍՍՐ Ժողովուրդներին կից Հայ-Լուսավորչական և կեղեցու Գործերի Մարմնի անու- նով Հայրենական Մեծ պատերազմի նակատից ստացված նամակը	13
Կրօնա-սյուսմական	15
7. Ակադեմ. Հ. Աճառյան—Մկրտիչ կաթողիկոս Երիմյան	15
8. Ավ. Իսահակյան—Ճարտարապետ Քորոս Քորամանյան	21
9. Վ. Բղոյան—Հայրենասիրութիւնը Գաբեզին եպիսկ. Արմենձառյանի երկերում	27
10. Գ. Լեվոնյան—Վատիկանի դիվան. խողերը կամ Սուլթանյան Ամիրբեգյան Հայոց Թագավորութեան թեկնածու	37
11. Պրոֆ. Այ. Աբրահամյան—Մեր միջնադարյան գրիչները	43

ՀՐԱՄԱՆԱԻ
ԱԶԳՈՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼԻ
ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. ԳԷՈՐԳ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՍՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏՎԻՐԵԿՈՒԹՅՈՒՆԸ

1941 թվի ապրիլին Մայր Աթոռում գումարված Համազգային ժողովը իր ընդունած կարևոր որոշումների շարքում Հանձնարարել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեվոր Խորհրդին պարբերաբար իր ներկայացուցիչները ուղարկել Միութենական Հանրապետությունների եվ արտասահմանի թեմերը, ի մոտո ծանոթանալու նրանց հոգեվոր-բարոյական վիճակի, տեղերի հոգեվոր իշխանություն գործունեության, նրանց կարիքների ու պահանջների հետ, որպեսզի ըստ հարկին ցուցումներ տրվեն թեմերում աշխատանքները բարձրացնելու և արդյունավետ դարձնելու նպատակով:

Բնական է, որ այդ աշխատանքները բացի այն, որ կրթականը թեմերը, առավել ևս սերտ հարաբերություն կտանգծեն աշխարհի զանազան կողմերում ցրված Հայության և Մայր Աթոռի միջև:

Ենելով Համազգային ժողովի առ իսկ որոշումներից, այլ և Մայր Աթոռի և արտասահմանի թեմերի մեջ ղոյություն ունեցող կապը ավելի ուժեղացնելու, ինչպես և այդ թեմերի վիճակի, հետ ծանոթանալու նպատակով Ամենայն Հայոց Հայրապետություն Ազգրնտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի տնօրինությունը ա թ. ապրիլին Մերձավոր Արևելք գործուղվեց Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի գիտական քարտուղար պրոֆեսոր-դոկտ. Ա. Արրահամյանը, որպես լիազոր ներկայացուցիչ Ա. Էջմիածնի և Ամեն. Տ. Տեղակալի: Պրոֆեսոր Արրահամյանի օգնական և անձնական քարտուղար է նշանակված պ. Անուշավան Տեր-Գրիգորյանը:

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգրնտիր Տեղակալը Հանձնարարել է իր

պատվիրակությանը այցելելու նախ Մերձավոր Արևելք՝ Իրանա-Հնդկաստանի, Ատրպատականի, Իրաքի ու Աֆիպոսի թեմերը, Երուսաղեմի վանքերն ու Երիվկիայի Տան կաթողիկոսությունը, իր հայրական սղջունն ու Մայր Աթոռի օրհնությունը առաջ դադուրհայ իր հոտին, ապա պատվորեցրել է ուսումնասիրել Իրանա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդի ընտրության՝ ինդիքը, Թեհրանի նոր թեմ կաթմակերպելու հարցը, անջատելով Թեհրանը չրջակայքով Իրանա-Հնդկաստանի թեմից, այս հարցում նախապես առնելով Իրանի գահակալի թույլտվությունը և նկատի առնելով Թեհրանի ու Սպահանի համայնական վարչությունների տեսակետները:

Հայրապետական պատվիրակությունը ս. թ. ապրիլին արդեն ժամանել է Ատրպատականի թեմի կենտրոնը՝ Թավրիզ:

Այն խանդավառ ընդունելությունը, որ Թավրիզի հայությունը ցույց է տվել Հայրապետական պատվիրակությանը, վկայում է թավրիզի հայության անսահման նվիրվածությունը Հայրապետական Աթոռին և Մայր Հայաստանին:

Բաղմամարդ ժողովում պատվիրակությունը տեղեկացրել է Թավրիզի հայ հասարակությանը Մայր Աթոռում կատարվող բարենորոգումների, հրատարակվող Հայրապետական ամսագրի, ինչպես և այն մասին, որ Մայր Հայրենիքում Հայրապետական Աթոռը միանգամայն անկաշկանդ տնօրինում է իր կրոնական ներքին գործերը և վայելում Հայաստանի կառավարության բարյացակամ վերաբերմունքը:

Նույն առը բաղմամարդ Հավաքույթում պատվիրակությունը միաժամանակ տեղե-

կացրել է այն խոշոր նվաճումների մասին, որ Սովետական Հայաստանը ձեռք է բերել գիտութեան, գրականութեան, արվեստի, շինարարութեան, տնտեսութեան և այլ աւարեզնեքում:

Պատմիչականութեան հաղորդումը առաջ է բերել խորը հետաքրքրություն և վառ հայրենասիրություն ունկնդիրներին մեջ:

Այդ է առում թավրիզում հրատարակվող «Վերածնունդ»-ը իր ապրիլի 24-ի խմբագրականում:

«Մենք սրտազին ողջունելով Մայր Հայրենիքից եկած Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգընտիր Տեղակալի պատվարժան պատմիչական պրոֆ. Ա. Արաւհամյանի մամանումը, բարի դալուստ ենք մտղթում նրան և իր քարտուղարին:

«Ուրախ ենք, որ երկար անդիներից հետո, այսօր Մայր Աթոռը լրջորեն գրադվում է մեր թեմերի բարեկարգման խընդրով: Ճանկանում ենք կատարյալ հաղորություն մեր գիտնական պ. պրոֆ. Արաւհամյանին: Վստահ ենք, որ նրա աշխատանքը շատ շուտով տուողջ ու կենսունակ ողի ու կյանք պիտի ստեղծե մեր թեմում»:

Հայրապետական պատմիչականութունը իրագեկ դառնալով Միյուտքի հայութեան եկեղեցական, կրթական, դպրոցական թեմերի հասույթների և այլ խնդիրների դըրվածքին ու սրբմաններին, Հնարաւթութուն կրնծեուի Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգընտիր Տ. Տեղակալին և ք.

էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին ընդհուպ ծածոթանալու և անծիջպախ անցնելու թեմերի բարեկարգման և դրա հետ կապակցված բազմաթիւ հարցերի արագ լուծման, թեմերի դեկավարութեան գործի մեջ աշխուժութուն մտցնելու հրատապ աշխատանքներին:

Միյուտքի հայութունը վաղուց ակնկալում էր Հայրապետական Աթոռի պատմիչականութեան այցելութեան: Նրա իղծն արդեն կատարված է:

Հայրապետական պատմիչականութունը կվերադառնա, անշուշտ, իր հետ բերելով Միյուտքի մի խոշոր հատվածի՝ Իրանի, Իրաքի, Սիրիայի, Երուսաղեմի, Եգիպտոսի հայութեան իղծեքը, նրա ցանկութուննեքը:

Հայութեան արդ հատվածի իղծերն ու ցանկութուննեքը հիմք կհանդիտանան հետագա այն ծավալուն աշխատանքների համար, որ կկատարվեն թեմերի հոգևոր, կրթական, դպրոցական և նրանց բարեկարգման այլ խնդիրների գծով:

Այս աշխատանքները ավելի և ք կամրամնեն ու անխոյզի կդարմնեն Միյուտքի հայութեան կապը Մայր Աթոռի և իրենց Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ:

Ճանկանում ենք ույժ և կարողութուն Հայրապետական պատմիչականութեանը հաղորդութեամբ կատարելու իր պատասխանատու առաքելութունը և արդարացնելու Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգընտիր Տ. Տեղակալի հուրմերը:



ՈՐԵՆՈՑՆ ՀՐԹՈՑ ՀՐԹՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿԱՆԻ ՏՆՈՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգընտիր Տեղակալ Ամենապատիւ Տ. Գե-
փորգ արքեպիսկոպոսի հանձնարարութեամբ
ապրիլ ամսին Մերձավոր Արևելք գոր-
ծուղից Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր
Խորհրդի գիտական քարտուղար պրոֆ.
դոկ. Արտա Աբրահամյանը, որպես ներկա-
յացուցիչ Ս. Էջմիածնի և Արևնայ. Տ.
Տեղակալի, Գրոֆ. դոկ. Ա. Աբրահամյանի
օգնական և անձնական քարտուղար է նշա-
նակված պ. Անուշավան Տեր-Գրիգորյանը:

Պատվիրակութեան անունով արված
կոնզակի մեջ Ամենայ. Տ. Տեղակալը դը-
ծում է այն նպատակը, որ դրված է պատ-
վիրակութեան առաջ և այն ուղեկիցը, որով
պետք է առաջնորդվի Հայրապետական
պատվիրակությունը իր առաքելությունը
կատարելու ժամանակ:

Ամենայ. Տ. Տեղակալի կոնզակի մեջ
ասված է.

«Հայաստանյայց առաքելական եկեղե-
ցու նախնի Հայրապետները հեռավոր
համայնքների հետ սերտ կապ պահպանելու
նպատակով ուղարկում էին իրենց նվիրակ-
ները նրանց մոտ, նրանց մխիթարելու և
եկեղեցական գործերի վրա վերահսկողու-
թյուն ունենալու համար:

«1941 թվի ապրիլի 10-ին Ս. Էջմիած-
նում զուգարված ազգային-եկեղեցական
ժողովին էլ հանձնարարել է Գերագույն Հո-
գեվոր Խորհրդին պարբերաբար ուղարկել
լիազոր ներկայացուցիչներ Միութենական
Հայրապետութեան և արտասահմանի թե-
մերը ծանոթանալու նրանց իրական վիճա-
կին, հոգևոր իշխանութեան գործունեու-
թյան, վերահսկողութեան և ըստ հարկին
ցուցումներ տալու նպատակով: Այլ և թե-
մերի ու Մայր Աթոռի մեջ գոյություն ու-

նեցող կապը ևս առավել խորացնելու և
սերտացնելու համար և այդ բոլորի մասին
ղեկուցանելու Գերագույն Հոգևոր Իշխանու-
թյան ի անորինություն:

«Ներկայումս նկատի առնելով, որ պա-
տերազմի պատճառով դժվարացել է մեր
հարաբերությունը արտասահմանի հետ,
հետևելով եկեղեցու պմանդական սովորու-
թյան և ի կատարումն ազգային-եկեղե-
ցական ժողովի որոշման, Մենք կարգում
ենք Ձեզ Մեր և Ս. Էջմիածնի ներկայացու-
ցիչ տալով Ձեզ իբրև օգնական և անձնա-
կան քարտուղար պ. Անուշավան Տեր-Գր-
իգորյանին այցելելու Մերձավոր Արևելքի
հետևյալ թեմերն ու վայրերը՝ Իրանա-
Հնդկաստանի, Ատրպատականի, Իրաքի, և
նզիպտոսի թեմերը, ս. Երուսաղեմի վան-
քը և Տանն Կիլիկիո կաթողիկոսութունը,
հաղորդելով նրանց ղեկավարներին Մեր
եղբայրական սիրո ողջույնը և Մեր ա-
ղոթքը Ս. Էջմիածնի դարավոր բոլոր սըր-
բություններին հիշյալ սրբավայրերի և թե-
մերի ղեկավարներին առողջություն և կա-
րողություն իրենց վրա դրված ծանր և
պատասխանատու լուծը հաջողությամբ կա-
տարելու և այդ վայրերում ապրող մեր
հոտին խաղաղ և բարօր կյանք շնորհելու
համար:

«Պատվիրում ենք Ձեզ առաջին այցե-
լությունը տալ Իրանին, նախապես ներկա-
յանալով Արեգակնախալլ Շահին և մյուս
բարձր պաշտոնական անձանց, նվիրելով
նոցա Մեր հարգանայ ողջույններն ու բա-
րեմաղթությունները:

«Իրանի Գահակալի թույլտվությամբ
և խորհրդակցությամբ Իրանա-Հնդկաս-
տանի կրոնական խորհրդի, այլ և նկատի
առնելով թեհրանի ու Սպահանի համայ-

նական վարչութիւնն նախադահների տե-
 օակետները, կազմակերպել թեհրանի թեմ,
 անջատելով թեհրանը իր լքվակալքով
 Իրանա-Հնդկաստանի թեմից, Նորակազմ
 թեմի վարչական կազմակերպութիւնն նը-
 կատմամբ հեռագրական հարաբերութիւն
 մեկ մտնել Մեզ հետ:

Ուսումնասիրել առտեղյակ Իրանա-

Հնդկաստանի թեմակալ Առաջնորդի ըն-
 րութիւն հարցը, վարհրդակցելով տեղա-
 կան եկեղեցական և ազգային հաստատու-
 թիւնների և կարևոր անձանց հետ, պար-
 զել այդ հարցի լավագոյն լուծումը և
 ներկայացնել Մեզ ի անորենութիւն, կա-
 բեմութիւն գեղարտ հեռագրով հարա-
 բերել:



Մ Ա Յ Ր Ա Ք Ն Ո Ռ

Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր տեղակալ Ամենապատիւ Տ. Գեղորդ արքեպիսկոպոսի հեռագիրը Մասկիայի և Համայն Ռուսիայի Սրբազնագույն Սինոդին:

ՈՒՂՂԱՓՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՌՆՈՐԻՆ

Ընդունեցեք Մեր և ս. Էջմիածնի Միաբանութեան խորին ցավակցութիւնը Մոսկվայի և Համայն Ռուսիայի սրբազնագույն Պատրիարք Սերգիի մահվան առթիւ: Աղոթում ենք Ամենաբարձրալին ուղղափառ եկեղեցու և նրա հոտի միեթարութեան համար և պարզեկու նրան արժանաւոր հաջորդ հանդուցյալին: Այսօր, կիրակի օրը, մայիսի 21-ին ս. Էջմիածնի Մայր տաճարում Մեր ներկայութեամբ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ և հոգեհանդիստ հանդուցյալ Պատրիարքի համար:

Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր տեղակալ ԳԵՎՈՐԳ արքեպիսկոպոս:

Մայիսի 21-ին կիրակի օրը ս. Էջմիածնի Մայր-տաճարում պատարագից հետո Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր տեղակալ Ամենապ. Տ. Գեղորդ Սրբ. Արքեպիսկոպոսի ներկայութեամբ հոգեհանդիստ կատարվեց ուստական պրաւոսլաւ եկեղեցու դուխ— սրբազնագույն պատրիարք ՍԵՐԳԻԻ մահվան առթիւ: Հոգեհանդիստը սկսվելուց առաջ սրբ. Տեղակալը հանդես եկաւ և սրատուչ խոսքերով հարմեց ի լուր ժողովրդյան պատրիարք Սերգիի մահվան բոթը, ապա տնայով հանդուցյալ պատրիարքի ընդթա-

ղումանը և դրվատելով նրան որպես ուսական պրաւոսլաւ եկեղեցու, ս. Սինոդի և ուս հոգեւորականութեան վերակենդանացման գործի քաջամուտ կազմակերպչի՝ ջերմագինս բարեմարտեց առ Աստված, որպէսզի հանդուցյալ պատրիարք Սերգիին հաջորդի արժանի մէ բռնէ, որն ի վիճակի լինի միեթարելու ուս հաւատացյալների հոտը:

Վերջացնելով իր խոսքը սրբ. տեղակալը կոչ արեց տաճարում ներկա գտնվող հաւատացյալներին հայ հոգեւորականութեան հետ միասին աղոթել առ բարձրայն Աստված հանդուցյալ պատրիարք Սերգիի հոգու հանգստյան համար:

Հաւատացյալները լարված ուշադրութեամբ լսեցին մարթանքի հուշիչ և ազդու խոսքերն ու ջերմեանդութեամբ հետևեցին հոգեհանդիստի արարողութեանը:

Ամենայն Հայոց Հայրապետութեան Արչընտիր Տեղակալ Տ. Գեղորդ Արքեպիսկոպոսի Մերձավոր Արեւելք ուղարկված ներկայացուցչութիւնը հասել է Թաւրիզ: Թավրիզի հայ հասարակութեանը ցույց է տվել խանդավառ ընդունելութիւն: Քաղաքի հայ հասարակական ընդհանուր ժողովը, որին մասնակցել է 1500 երիտեւ հայ ժողովական, ամենայն ուրախութեամբ լսել է Ամենապ. Տ. Տեղակալի ներկայացուցչի պրոֆ. դոկտ. Աշ. Աբրահամյանի զեկուցումը Երևանի կացութեան, Պետ. համալսարանի, ս. Էջմիածնի բարոյական, կրօնական և տնտեսական վիճակի մասին և դժ սրտով թողել դաւիճը:

Ամենապ. Տ. Տեղակալի ներկայացուցչութեանը ապրիլի 19-ին Թավրիզից մեկնել է Թեհրան ներկայանալու Իրանի շա-

Հիմն և նրան հանձնելու Ամենայ. Տ. Տե-
ղակալի կողմից:

Առաքատականի թեմի առաջնորդ Գե-
րաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք
Քանդյանը հաղորդում է Ամենայ. Տ. Տե-
ղակալին, որ Քավրիզի հայությունը հան-
գանակել է 500.000 բիալ հոգևոտ Հայաս-
տանի այն որբերի, որոնց Հայրերը նաև
տակվել են Հայրենական պատերազմով:
Այդ դուժարով զնվում են հազուտներեն և
կոչկեղեն, որոնք Հայաստան կուղարկվեն

Քավրիզի սովետական հյուպատոսարանի
միջոցով:

Քավրիզի հայությունը «Սասունցի
Դավիթ» տանկային շարասյան համար նը-
վիրել է 267.000—300.000 բիալ:

Առաքատականի թեմական Խորհուրդը
Ամենայ. Տ. Տեղակալի տրամադրությամբ
սակ է դրել 30000 բիալ Մայր Աթոռի
ուպագրական կարիքների համար:

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ս Ե Ր Գ Ի

Ռուսաց ուղղափառ եկեղեցու Սինոդը խորին վշտով հայտնում է, որ սույն թվի Մայիսի 15-ին առափոստյան 6 ժ. 50 րոպեին ի Տեր Հանգյալ Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարքը՝

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՑՆ ՍԵՐԳԻՆ

**ՍՐԲԱԶՆԱԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՄԱՀԸ ՅԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ.
26-ԱՄՅԱ. ՀԱՍՑԿՈՒՄ**

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ս Ե Ր Գ Ի Թ Ա Ղ ՈՒ Մ Ը

Սույն թվի Մայիսի 18-ին Մոսկվայում պատրիարքական Աստվածա-
հայտնության Մայր տաճարում տեղի ունեցավ Մոսկվայի և Համայն Ռու-
սիայի վախճանված Սրբազնագույն Պատրիարք Սերգիի Հոգեհանգիստն ու
թաղումը:

Պատրիարքի պերճ զարդարված դագաղը դրված էր տաճարում, ծած-
կված պատրիարքական պատմունճանով ու ծաղիկներով:

Հանգուցյալ Պատրիարքի Հոգեհանգստին մասնակցում էին միարուպո-
լիտներ Ալեքսին, Նիկոլայը, Իոհանը, 14 եպիսկոպոս և Մոսկվայի Հոգե-
վորականության ավելի քան 100 ներկայացուցիչ:

Պատրիարքի Թաղմանը հավաքվել էր հավատացյալների, Աստվածա-
հայտնության տաճարի և Մոսկվայի մյուս եկեղեցիների ծխականների հրա-
կայական մասոս:

Թաղմանը ներկա էր ՍՍՌՄ Ժողկոմսովետի ներկայացուցիչ Գ. Գ.
ԿԱՐՊՈՎԸ:

Ցերեկվա մամը մոտ 4-ին եկեղեցական սգո մեծ թափորը դադարով և
խաչվառներով պատեց տաճարի շուրջը, որից հետո հենց այդտեղ՝ տաճա-
րում կատարեց թաղումը:

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ԿՈՂՄԻՑ

ՍՍՌ Միության Ժողովրդական Կոմիսարների Սովետը Մոսկվայի և
Համայն Ռուսիայի Սրբազնագույն Պատրիարք Սերգիի մահվան կապակցու-
թյամբ իր խոր ցավակցությունն է հայտնել ուսական ուղղափառ եկե-
ղեցու Սրբազնագույն ՄԻՆՈՂԻՆ:

(«Սովետական Հայաստան»)

**ՎԵՐԻՍՏՐՈՒ ՑԵՂԱԳՈՒ ՄԻՑՐՊՈՒԼԻՑ ԱԼԵՔՍԻՆ ԵՍԵԱԿԸ
ԺՈՂՈՎԱԴԱՆՆ ԿՈՄԻՍԱՐԱՆԻ ՈՍՎԵՑԻ ԵՍԿԵՊԱԿ
ՈՍՎԵՑԱԿՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՇՅԱԼ**

Ի. Վ. Ս Տ Ո Ւ Ի Ն Ի Ն

Թանկագին ԻՈՍԻՑ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԾ .

Մեր ուղղափառ եկեղեցուն համարժեք ծանր փորձութիւն վիճակից :
Վախճանից պատրիարք ՍԵՐԳԻՆ, որ 18 տարի կառավարում էր Ռուսա-
կան Եկեղեցին :

Ձեզ լայլ հայտնի է, թէ ինչպիսի իմաստությամբ էր նա կատարում
այդ դժգոյսին աշխատանքը :

Ձեզ հայտնի է նաև նրա սերը դեպի Հայրենիքը, նրա հայրենասիրու-
թիւնը, որը ոգևորում էր նրան պատերազմական փորձութիւնների ներ-
կա գործաշրջանում : Իսկ մեզ, նրա մերձավոր օգնականների, մոտիկից
հայտնի է նաև նրա ամենամեծ սիրո զգացմունքը դեպի Ձեզ և նվիրու-
թիւնը Ձեր նկատմամբ, որպես մեր Մեծ Միութեան ժողովուրդների
իմաստուն, Աստուծո կողմից կարգված առաջնորդի (այս նրա մշտական ար-
տահայտութիւնն է) : Այդ զգացմունքը նրա մեջ առանձնահատուկ ուժով
զրսեռութեց Ձեզ հետ անձամբ ծանոթանալուց հետո, անցյալ տարի սեպ-
տեմբերի 4-ին Ձեզ գետ մեր ունեցած մեզ համար անմոռանալի տեսակցու-
թիւնից հետո : Ինձ քաղմից փիճակիվ է նրանից լսելու, թե նա ինչպիսի
լեքձ զգացմունքով էր վերհիշում այդ տեսակցութեան մասին և թե ինչպի-
սի բարձր, պատմական նշանակութիւն էր տալիս նա եկեղեցական կարիք-
ների նկատմամբ Ձեր կողմից ցուցաբերված, մեզ համար խիստ արժեքավոր
ուշադրութեանը :

Նրա մահով մեր եկեղեցին որբացավ : Վախճանված պատրիարքի կտակով
Աստված ինձ շնորհեց իմ վրա ընդունելու Պատրիարքի Տեղապահի պաշ-
տոնը :

Ինձ համար կյանքիս մեջ և եկեղեցուն ծառայելու այս ամենապատաս-
խանատու պահին ես պահանջ եմ զգում Ձեզ, թանկագին ԻՈՍԻՑ
ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԾ, հայտնելու նաև իմ անձնական զգացմունքները :

Իմ առաջիկա գործունեութեան մեջ ես շարունակ և անշեղորոք կզեկա-
վարվեմ այն սկզբունքներով, որոնցով նշված էր հանդուցյալ Պատրիարքի
եկեղեցական գործունեութիւնը՝ հետևել եկեղեցական կանոններին և որո-
շումներին մի կողմից, և մշտական հախտարմութիւն ցույց տալ Հայրե-
նիքին ու Ձեր գլխավորած մեր Գառավարութեանը, մյուս կողմից :

Գործելով Ռուսական Ուղղափառ եկեղեցու գործերի խորհրդի հետ լի-
ովին միաբան ես հանդուցյալ Պատրիարքի հիմնած Սրբազնադուին ՍԻՆՈՒԻ
հետ միասին երաշխավորված կլինեմ սխալներից և անճիշտ քայլերից :

Յնչրում եմ Ձեզ, մեծարգո և թանկագին ԻՌՄԻՑ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ,
 իմ այս համաատիացումներն ընդունել այնպիսի վստահությամբ, ինչպես
 նրանք ընդունում են ինձանից և համատար Ձեր նկատմամբ մեր տանան խորին
 սիրո և երախտագիտության արայմունքներին, որոնցով առգործած են բո-
 լոր այտմիանից իմ հոգիից զնկավարժող եկեղեցական աշխատողները:

Ա.Ն.ՄԻ

Լեհիմզրադի եւ Կովզորոզի Միբուպոլիս
 Պարիսի մեղապան

Մոսկով, 18 Յայիսի 1844 թ.
 (Մոսկով. Հայաստան)

ՀԱՅԲՈՒՆԵՒԿԱՆ ՊԵՏԵՐԱԶՄԻ ԺԱՆՏՈՒՄ

**«ԱՍՏՈՒՆԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱԾԻՆ ԵՄՐԱՍԵԱՆ ԱՆՔԱՎԱԶՄԻ ՍԱՐԻԿՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՊԵՏԵՐԱԶՄՈՒՄ ՅՈՒԹԵ ԵՆ ՏԱԼԻՍ ԱՐԻՈՒԹՅԱՆ, ԽԻԶԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԵՐՈՒԹՅԱՆ
ՊԱՆԾԱԼԻ ՕՐԻՆԱԿ**

ՀՄՍՈ Ժողկամսովետին կից Հայ-լուսավորչական եկեղեցու գործերի
ձորհրդի նախագահ Ս. Ն. ՀովիթաՍիսյանի անունով ստացված է հետևյալ
Հաղորդագրությունը Մոսկվայից.

«Տանկային գործաձափ հրամանատար փոխգնդապետ Վոյնովսկին ու-
ղարկել է ինձ նամակ, որի մեջ Հաղորդում է Հայ հոգևորականության և
Հավատացյալների միջոցներով կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային
լարասյան պատկանող տանկերի անձնակազմի մարտական գործողությու-
նների մասին.

«Ընկ. Վոյնովսկին գրում է.

«Հայ Ժողովրդի առասպելական հերոս Սասունցի Դավիթի անունը կրող
տանկերը գտնվում են մտառհեյի ձեռքերում, Գերմանական զավթիչների
դեմ մղվող մարտերում տանկիստները իրենց պսակել են անթառամ փառ-
քով.

Մեր գործաձափ զարնանային ուղեխափանքի դժվարին պայմաններում
10 օրվա ընթացքում մարտերով անցել է մոտ 200 կիլոմետր, ալատապրե-
լով հարյուրավոր բնակավայրեր, Ֆաշիստական ստրկությունից փրկելով
Հազարավոր սովետական մարդկանց:

Տանկիստներն իրենց խելախս դրոհներով «Սասունցի Դավիթ» անվան
տանկերով բազմիցս ճեղքել-անցել են Հակառակորդի թիկունքը և այնտեղ
առաջացրել խուճապ ու իրարանցում, գերմանացիներին ստիպելով հապ-
ճեպորեն փախչել և նետել իրենց ամրողջ տեխնիկան:

Այսպես ճեղքելով անցնելով Հակառակորդի թիկունքը, տանկերը ներ-
խուժել են Գ. քաղաքի մատույցներով հզոր հենակետ հանդիսացող Ռ կայա-
րանը և ջախջախել գերմանական կայազորը: Տանկիստները ամրանալով
նվաճված բնազձերում, ետ են մղել գերմանացիների բոլոր Հակադրոհները
և ձախողել կորցրած կայաքանը վերադարձնելու նրանց բոլոր փորձերը:
Հիսուրականների ջախջախումը և տանկիստների կողմից կայաքանի պրա-
վումը Հակառակորդին ստիպել է ետ նահանջել նաև Հարևան Հատվածնե-
րում և հնարավորություն է ափել մեր գործերին մոտենալ քաղաքին, մար-
տեր սկսել նրա ծայրամասերում:

Այդ մարտերում մեր գործաձափ զգալի Հարվածներ է հասցրել հիտ-
լերյան գործերին: Տասն օրվա ընթացքում «Սասունցի Դավիթ» տանկերը
ոչնչացրել են 18 տանկ և ինքնազնաց հրանոթ, զանազան տրամաչափի 20
հրանոթ, 60 զնդացիք, 210 ավտոմեքենա գործերով և բեռներով, ոչնչաց-
րել են գերմանական ավիաի թան 2-700 զինվոր ու սպա:

Անձնակազմը ցույց է տվել իսկական ռազմական վարպետություն և հմտություն, դարձել է վճռականորեն, համարձակ, արիտքար ու խիզախ:

Միայն վերջին մարտերի ընթացքում ավելի քան 40 մարտիկ ու սպա պարզևատրվել են Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով:

Մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող ազատագրական մեծ պատերազմում սովետական մարտիկներն ու սպաները ցուցաբերում են հերոսության հրաշքեր:


Հանդիսանալով Հայթիական Կարմիր Բանակի մի մասնիկը մենք առաջիկայում ևս Հայ Ժողովրդի առաջաելական հերոս «Մասունցի Դավիթ» անունը կրող տանկերով անխոնջ կերպով կխփենք թշնամուն, նրան դուրս վռնդելով մեր երկրի սահմաններից: Բազմապատկենք սովետական տանկիստների փառքը, սովետական ժողովրդի փառքը:

Կեցցե՛ Հայթիական Կարմիր Բանակը:

Կեցցե՛ Մեծ դորսվար, Սովետական Միության Մարշալ ՄԵՍ ՄՏԱԼԻՆԸ, որը մեր ժողովրդին տանում է դեպի վերջնական Հայթիանակ դերմանաֆալիստական զավթիչների դեմ:

Ձեր պատասխան նամակը կհաղորդվի «Մասունցի Դավիթ» շարասյան տանկիստներին:

Դեզպպե ԿԱԼՈՍԱԳ



ՍԿՐՏԻՉ ԿԼԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄՅԱՆ

(1820—1907)

ԺԹ դարի հայ ազգային-կրոնական կյանքի տեսանկյունից դեմքն է Մկրտիչ Խրիմյանը:

Նա ծնվել է Վանում՝ 1820 թ. ապրիլի 2-ին: Նրա հայրը վաճառական էր, որ զասպան տեսակի գործվածքներ էր արտահանում Խրիմ. այս պատճառով էլ ըստացվել է Խրիմյան ազգանունը: Մանուկ Մկրտիչը մեծացավ ազատ բնության ծննդում, Արդեստանի բարձրաբերձ ծառերի, այգիների և առուների մոտ, իր հորեղբայր Խաչատուրի խնամքի տակ: Այս անձը վերին աստիճանի առաքելի, բարեպաշտ և ողորմած մարդ էր, արհեստով ուսուցանակ, որ դեռեր նաև կարգալու ու գրել, հմուտ էր Ս. Գրքին և եկեղեցական ժամասցության: Մկրտիչը մի կողմից սովորում էր սաստյանկություն, մյուս կողմից կարգալու ու գրել. նրա մեջ մի կողմից բուն դրավ կրոնական բարեպաշտությունը, ողորմածությունը, մյուս կողմից՝ բնության սերը: Մկրտիչի մեծ եղբայրը աչքեպան էր, և ազատ ժամերում Մկրտիչըն էլ նրա մոտ սովորում էր գործնական աղբյալանություն: Երբ մեծացավ, պատանի դարձավ, նա սկսեց շարունակ ման դալ այն վանքերը, ուխտավայրերն ու հայրենական ավերակները, որոնցով լի է վաստուրականի ամեն մի անկյունը. մի ժամանակ մնաց լիվ և Կոստյ, անապատներում, ուր սովորեց գրաբար լեզուն և հին հայոց եկեղեցական գրականությունը: Այդ ժամանակից Մկրտիչի մեջ միտք ծագեց ժանելու կրոնական ապարեղք, բայց ծնողները չթողեցին և նրան ամուսնացրին:

Այդ միջոցին տանկաց պետությունը սկսում էր պովառացի հայերից պիմվոր առնել: Երիտասարդ Մկրտիչը ղիմվոր պրությունից թափափելու համար դուրս ե-

կավ երկրից. նա դեպի Պարսկաստան, տեսավ Ուրմիա, Սալմաստ, Խոյ, անցավ Թրասիք, մասով Գողթն գավառը, Նախիջևն, Երևան, Վրժիածին, ման եկավ Անիի ավերակներում և այդպես Հյուսիսային Հայաստանի զանազան կողմերը շրջապայթյալ հետո անցավ Պալա:

Չուրի լինելով դրամական միջոցներից՝ ապրուստ ղտնելու նպատակով նա սկսեց Պսլում կոչկահարությունը պարտել: միևնույն ժամանակ առաջ էր անում իր մտալար ղաատարակություն գործը: Նա արդեն այնքան հմտացել էր գրաբար հոլերեն լեզվին, որ սկսել էր գրել ընդարձակ բանաստեղծություններ: Այս ժամանակ (հազրատունին արել էր հայկական շարիք պլուտը. Խրիմյանը ողբվորվում է այդ շափով և գրում է Բազրատունուն նվիրված մի դրվեստ՝ հայկական շափով, որը հրատարակվում է Վաստավեպա-ի մեջ (1849 թ.): Դա լինում է Խրիմյանի առաջին ղրական վաստակը:

Շնորհիվ իր դիտություն, հեղահամբույր բնավորության Խրիմյանը շուտով ձեռք է բերում մեծ հաջողություն: Նա մուտք է գործում ազնվական ընտանիքների մեջ՝ իբրև ուսուցիչ և բարեկամ, կարգվում է ուսուցիչ Պոլսի Թողային դպրոցներում, վայելում է հատկապես Օսյան ընտանիքի սերը. պետական ու ազգային նշանավոր գործիչ Գրիգոր Օսյանը գտնում է նրա սիրելի բարեկամն ու աղբյրիկ սյալապանը:

1850 թվին Խրիմյանը հրատարակում է իր մեծ բանաստեղծական երկը՝ «Հրատարակ Արարատյան»: Դրանից հետո ուխտի դնալով Երուսաղեմ և շրջապայթյալ գրիտունեական սրբավայրերը՝ հրատարակեց իր երկրորդ բանաստեղծական երկը՝ «Հրատարակ»:



ՄԱՐՏԻՋ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԿՐԻՍՏԱՆ

րակ երկրիս Ավետյաց» (տպ. Պոլիս 1851) :

Թրիմյանի անունը արդեն հռչակված էր :

Թրիմյանը իբրև բնիկ Հայաստանցի, սնված հայ երկրի ու հայ ժողովրդի ծոցում, ավելի խոր գիտակցելով նրա կարիքները, ավելի անձնվիրությամբ նեղակեց ապարկը : Նա ուղարկվեց Կիլիկիա Հիմնելու համար հայ դպրոցներ, Բայց Առիմէջ չկարողանալով հաշտվել կաթողիկոսի հետ, կարճ ժամանակից հետո ստիպված եղավ վերադառնալ Պոլիս : Այստեղ Հասունյանց կոնվենտի առթիվ հրատարակեց անստորագիր մի տետրակ՝ «Բան առ Մխիթարյան միաբանութուն» (Պոլիս, 1853), որի մեջ դասափետում էր պատկանութան փառամոլութունը : Քիչ հետո դնաց Վան, ուր մեռած գտավ իր կնոջը և իր միակ աղջկանը : Ընտանեկան այս դժբախտութունը դրդեց Թրիմյանին Բասործելու իր հին ցանկութունը և օժվելով վարդապետ՝ դարձավ Վարագա վանքի միաբան :

Թրիմյանի նպատակն էր վանքում հիմնել դպրոց և տպարան, հավաքել այդտեղ հայ ժողովրդի դավաններին և նոր՝ եվրոպական գիտության լուսով լուսավորելով նրանց՝ ուղարկել Հայաստանի զանազան կողմերը՝ ազգային կրթութունը, մոռացված լեզուն ամենուրեք տարածելու համար : Միևնույն ժամանակ նա դուրս եկավ կուպելու ժողովրդի շահերի՝ համար՝ վայրատու ջոջերի, կաշառակեր և անարդար պաշտոնյաների և միջնադարյան խախտարածիտ հողեորականների դեմ : Իր գեները քարոզն էր, կենդանի խոռը եկեղեցու բեմից : Թրիմյանը ճարտասան էր, բայց ոչ այն ճարտասաններից, որոնց աղդեցութունը լեզվի գեղեցիկութան, ճոխության կամ պերճության մեջ է : Նա խոսում էր պարզ ու հասարակ լեզվով, ժողովրդի հասարակ կյանքից, նրա ըմբռնած ու նրան մատչելի օրինակներով ու առակներով : Նրա քարոզների մեջ չկային հին սխոլաստիկ ոգին, Ս. Գրքի հնարարյան բացատրութունները, աստվածաբանական ներութուններ, այլ մաքուր

բարոյականը, ազգային հերոսների կյանքը, առօրյա կյանքը շոշափող հարցեր, կրթական ու տնտեսական խնդիրներ : Ժողովուրդը սիրեց նրան իբրև իր հարազատի :

Հառկանալի է, որ ազատախոհ վարդապետի դեմ դեռ ատենին ամբողջ հին սերունդը, ջոջերը, կեղեքիչները և խավար հողեպորականութունը, Թրիմյանը նորից դնաց Պոլիս իր ծրագրերը հաջող հիմքերի վրա դնելու համար : Այստեղ նա ձևեց բերելով ազատամիտ կուսակցության պայտպանութունը, կազմեց իրեն աջակից, «պաշտպանողական ընկերութունը», դնեց մամուլ և հենց Պոլսում սկսեց հրատարակել «Արծիվ Վառպուրակամի» ամսաթերթը (1855 թ.), որից հետո անցավ Վան և պատրիարքական կոնդակով հաստատվեց Վարագա վանքի վանահայր :

Թրիմյանը Վարագա վանքը դարձրեց հայ ժողովրդի լուսավորության առաջին կենտրոնը : Եղբորն նա հիմնեց ժառանգափորաց դպրոց, որտեղ առաջին անգամ ուսումը դրված էր եվրոպական ուղղությամբ, ավանդվում էին գիտութուններ և հայոց պատմութուն : Նա հիմնեց նաև տպարան, այստեղ փոխադրեց «Արծիվ Վառպուրակամի» ամսաթերթը, հետո բացավ գրադարան և թանգարան :

Թրիմյանն իր հիմնարկութունների ծյուրեպակներ ապահովելու նպատակով նորից ստիպվեց դնալ Պոլիս, ապա անցավ Կովկաս և Թիֆլիսում, Գանձակում ու Շուշում հանգանակութուն անելով եկավ Երևան, Նախիջևան, Աղուլիս և Պարսկահայաստանի վրայով վերադարձավ Վարագ : Այնուհետև Տարոնի ժողովրդի ցանկության համաձայն Թրիմյանը ընտրվում է առաջնորդ Տարոնի և վանահայր Ս. Կարապետի վանքի, իր վրա պահելով նաև Վարագի վանահայրութունը : Թրիմյանը Վարագը հանձնելով իր կարող աշակերտներին վերցրեց իր հետ մի մամուլ, տատեր և իր մի քանի ընդունակ աշակերտների հետ անցավ Տարոն : Այստեղ Ս. Կարապետի հրովակավոր վանքի մեջ բացավ երկրորդ տպարանը, ժառանգափորաց դպրոց, հիմնեց

«Արեւիկ Տարոն» կիսամյա թերթը, որի խմբագրութունը հանձնեց իր արժանավոր աշակերտ Գարեգին վրդ. Սրբանձառյանին: Խրիմյանի աշակերտներից ուրիշները՝ ոմանք ուսուցիչ, ոմանք վարդապետ՝ ցրվեցին Հայաստանի դանազան կողմերը բանալու նորանոր դպրոցներ, ժողովուրդը կրթելու և դաստիարակելու: Խրիմյանը եղա՞վ այդ բոլորի հայրը և ժողովուրդը սովեց նրան «Հայոց Հայրիկ» սիրելի տիտղոսը, որը Խրիմյանը զուրգուրանքով պահեց մինչև վերջ:

Տարոնում լուսավորության գործը ավելի մեծ խոչընդոտների հանդիպեց: Մի քանի վանականներ, որոնք այլևս զրկված էին վանքի եկամուտները ազատորեն վաճելու իրավունքից, մի քանի վախառուներ ու կեղեքիչներ, որոնց ախորժակները այլևս սանձված էին, սկսեցին դավադրութուն սարքել նրա դեմ: Նրանք դիմում էին մերթադրալին իշխանության՝ պահանջելով պաշտոնանկ անել նորամիտ վարդապետին, մերթ դիմում էին պետութան՝ ամբաստանելով նրան իբրև ապստամբութուն քորոզ: Մինչև անգամ նրանք զինեցին քրդական սամոխր և վանքի դռները փակելով՝ արյունահեղ կռիի դուրս եկան նրա դեմ: Խրիմյանը ստիպված էր իր թշնամիներին առատելու համար քանկո անձամբ գնալ Պոլիս, որտեղ կատարվեց քննութուն, Խրիմյանը արդարացած և վանականներն աքսորվեցին: Այդ միտցին էր, որ Խրիմյանը անգամ կիսկածին և օծվեց կախկոպոս: Բայց հողով վերադարձել էր Տարոն. երբ րևառվեց Պատրիարք Կ. Պոլսոս (1869): Տարոնից մինչև Պոլիս նրա երթը մի հաղթական թափոն էր:

4 տարի մնաց Խրիմյանը պատրիարքական աթոռի մոտ. այդ շրջանում իր գործն եղավ Ազգ. Սահմանագրութունը ժողովրդողականացնել, առաջ քաշել ժողովրդի միջին տարի սղուսուն բարձր պաշտոնների: Հետ մղեով սղնմականներին: Բայց նրա պատմական և անհնամեծ գործն եղավ Ազգային ժողովի քննութունների առարկա դարձնել: Հայաստանի ժողովուրդի հարստահարյալ վիճակը, որ առանձին անդեկա-

գրությամբ մատուցվեց պետութան և նրա դարձանը խնդրվեց: Այսպես ծնվեց հայոց հարցը, որը իր այն ժամանակվա դրվածքով մնաց որպես «Հայոց հարց»: Շատ ուշ, միայն Սովետական Իշխանության որով հայ ժողովուրդը ստացավ իր իսկական ազատութունն ու անկախութունը:

Բայց Խրիմյանը դժգոհ մնաց Սահմանագրական այն կարգերից՝ որ այն ժամանակ տիրում էին Պոլսում: Նա առաջարկեց վերաքննել Սահմանագրութունը և գործցել նրա մեջ այն դրութունը, որով դավանները նախ կախում պիտի ունենային Պոլսից: Այս ձևով նա, հարուցեց իր դեմ երեսփոխանների մի մտտի հակառակութունը, որոնք նրան համարում էին հախառնամանադրական: Հակառակ էին նաև այն բոլոր աղնվախանները՝ որոնց ի միաս գործել էր Խրիմյանը, մտտեցնելով իրեն ժողովրդական դասը: Վերջապես Խրիմյանը ստիպվեց հրաժարվել պատրիարքութունից (1873): Այնուհետև նա ապրեց Պոլսում՝ իբրև քարոզիչ Յուսեփյանի եկեղեցում, միևնույն ժամանակ իրար ետեվից հրատարակում էր իր գրական աշխատութունները:

Ռեալ-տանկական պատերազմից հետո հայոց հարցը նոր կերպարանք ընդունեց: Հայոց հարցը շնորհիվ Ներսես պատրիարքի բարձրագույն եվրոպական պետութունների դիմանը, Սան-Ստեֆանոյի մեջ 1878-ը հողվածը դրվելուց հետո, երբ իր վիճում գումարվեց եվրոպական վեհաժողովը, Ներսեսը մտածեց հայոց հարցը ներկայացնել, այնտեղ և մի դարձան խնդրել: Ընարվեց Խրիմյանը, որ իր թարգման Մինաս Չերապի հետ ման պիտի գոր եվրոպական մայրաքաղաքները՝ պատրաստելու համար մտքելը և հետո Բերլինում՝ Նար-Պեյի հետ պիտի ներկայանար վեհաժողովին: Խրիմյանը մեկնեց Պոլսից և այցելելով Հոռոմ, Վիեննա, Փարիզ, Լոնդոն, մեկտեղ դրավ հայ ժողովրդի ցավո և խնդրեց պետութունների արակողութունը. այնուհետև Բերլինում Նար-Պեյի հետ վեհաժողովին մատուցեց մի հուշագիր, որով խնդր-

բում էին Հայոց Համար տեղական ինքնա-
գարութիւն: Վեհաժողովը տվեց Հայասնի
61-րդ Հոդվածը (1878):

Հայերը իրենց ակնկալութեան մեջ
նուախար դտնվեցին. ամենից առաջ Հայ-
րիկը Յուսկիտարի եկեղեցում Բերլինից
վերադառնալուց հետո խօսեց իր նշանավոր
քարոզը, որի մեջ Հարիտայի և երկաթե շե-
րեփի օրինակով քարոզում էր պենք առնել
բնութեան դեմ՝ իր իրավունքը հոգրեների
առաջ Հարգելի դարձնելու համար:

Թրիմյանը Պոյսում երկար չմնաց. նա
նորից դարձավ Վարազ իր սիրած ժողո-
վրդի ծօցը. այստեղ նա հանուշքով տեսավ
իր ցանած սերմերի արգասիքը. ամեն կողմ
դպրոցներ էին բացվել, մի ուսումնատենչ
սերունդ էր առաջ եկել, դարգացել էր ժո-
ղովրդական գիտակցութիւնը և Թրիմյանը
նորից շարժեց Վարազի մամուլը՝ իր Հին
ու նոր աշակերտների սովար խմբի հետ:

Այս անգամ մի մեծ պատուհաս սպառ-
նում էր Վանին: Դա օտին էր, պատերազմի
սև արդյունքը, որին զոհ պիտի դնար ամ-
բողջ Վասպուրականը: Պոյսում կազմեց սո-
վալներին օգնող հանձնաժողով: Աշխարհի
ամեն կողմից ցրված Հայերը արժագանք
տվին Թրիմյանի կոչերին և սկսեցին ուղար-
կել իրենց առատածեղն նվերները: Գու-
մարները փոխադրվում էին Հայրիկին և նա
իր ձեռքով բաժանում էր առանց ազդի և
կրօնի խտրութեան Հային, տաճկին, քրդին,
ասորուն և եգիպտին: Այստեղ երևաց Թրի-
մյանի ճշմարիտ մարդասիրութեան ոգին և
նրանով կարողացավ սեր ու հարգանք ներ-
շնչել քուրդ ցեղերի մեջ դեպի իր ազդը և
դեպի իր անձը մասնավորապէս: Այս ժամա-
նակ Թրիմյանը հղացավ Վանում երկրա-
գործական դպրոց բանալու միտքը: Նա բե-
րել տվեց եվրոպական գութան, երկրագոր-
ծական նոր գործիքներ, հրաժիրեց մասնա-
գետ ուսուցիչներ, որոնք աշակերտներին
սովորեցնում էին նոր մեթոդներով հողը
մշակել:

Բայց Թրիմյանի գործունեութիւնը
արդեն առաջ էր բերել կասկած տաճիկ կա-

ռաւարութեան շրջաններում. նրա ներկա-
յութիւնը Հայաստանում մնասակար Հա-
մարվեց. սուլթանական հրամանով Թրի-
մյանը Պոլիս կանչվեց և հետո Հայկական
շարժումների հետեանքով աքորվեց Երու-
սաղեմ (1890): Բայց այդ աքորը շատ եր-
կար շտեմեց. 1892 թվին Էջմիածին Հա-
վաքված Համազգային ժողովը բարձր դնա-
հատելով Թրիմյանի արժանիքներն ու ազ-
գային գործունեութիւնը միաձայն ընտրեց
նրան Ամենայն Հայոց կաթողիկոս:

Նորընտիր կաթողիկոսը Եվրոպայի
ճամբով անցավ Էջմիածին և այցելութիւն
տալով ուսաց կայսեր նստեց իր գահը:

Թրիմյանը կաթողիկոսական դաճի վրա
կարողացավ ունենալ այն մեծ գործունե-
ութիւնը, որ ցույց էր տվել իր պատրի-
արքական, մանավանդ վարդապետական
չրջանում: Եվ այդ այն դաժան պարմանե-
րի սխառճոտով, որոնցով կաշկանդել էր
նրան ցարական բռնակալ պետութիւնը,
մանավանդ կովկասյան շարակած իշխանու-
թիւնը: Դառն արտով տեսավ Թրիմյանը
տաճիկաւայերի կոտորածը, կովկասյան
բռնութիւնները, եկեղեցական կալվածների
դրավումը, թուրք-Հայկական ընդհարում-
ները, որոնց բարձման համար իր դիմում-
ները Ռուսաստան և Եվրոպա մեծ մասամբ
անօգուտ անցան:

Թրիմյան, ԺԹ դարի Հայ Հոգեւորա-
կանութեան մեծագույն դեմքն է. նրան քաջ
ծանոթ էին բոլոր այն իրողարձութիւննե-
րը, որոնք տեղի են ունեցել ԺԹ դարի Հայ
Հասարակական կյանքում: Այդ իրողար-
ձութիւններին նա ոչ միայն օտակ ականա-
տես է եղել, այլև գործոն մասնակից: Նրան
ծանոթ էր ողջ Հասարակական կյանքը շխ-
նականի անշուք խրճիթից մինչև եվրոպա-
կան ճոխ պայտաները: Իր ժամանակի Հա-
սարակական կյանքի բոլոր վայրիվերում-
ների մեջ Թրիմյանը հանդիսացել է միայն
ճշմարիտ քրիստոնեայի, ճշմարիտ Հայրե-
նասերի և ճշմարիտ ժողովրդական մարդու
տիպարը: Այս պատկերով դտնում ենք նը-
րան իր բոլոր դրական գործերի մեջ:

Ա. Կազեմիկոս Է. Ա. Մ. Ռ. Ռ. Ռ. Ն.



ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Թ. Թորամանյանի չեա ծանոթացա
անասի կարապետ Բասմաչյանի միջոցով
հասանդրապարտում (Լենինական) 1903 թ.
նանք: Նրանք նույն այդ թվականին էին
ել արասասհմանից, և ամառը միասին
ցկացրել էին Անի քաղաքում Նետազո-
թյունների համար:

Կ. Բասմաչյանը մեծ գովեստով խոսեց
արարապետ Թորամանյանի գիտություն
կարողությունների մասին և խնդրեց ինձ
ընկերներին, որ անկեղծ նրան, ինչքան
արդեանք:

Քաջաձեռն, անշուք, բուռ մարդու ապա-
րություն թողեց ճարտարապետը ինձ
ա:

Այս առաջին հանդիպումից հետո,
բժեն նա անհայացա՞վ, մենք էլ մոռա-
լու վրա էինք նրան, երբ նույն տարվա
ետը, պատահաբար, հանդիպեցի նրան:
Վաղարշապատ էի գնում, նա ևս: Մի-
ուսին վազոնում, լուսամուտի առաջ,
տեղինք դեմ առ դեմ և սկսեցինք զրույց
ել: Ես հարցրի առաջիկա տարվա ծրա-
նների մասին:

«Անի քաղաքում պիտի աշխատեմ, նը-
սակա այդ է...»

Հանկարծ ընդհատվեց զրույցը: Չյունի
մեակ դաշտերի վրա, ձմեռվա պարզ,
պուշտ երկնքի տակ, ցերեկվա պայծա-
րության մեջ ձգվեց Անիի կարճրավուն
սրբապետի կախարդիչ կարավանը, որ
թփում էր, փայլում, հեռանում էր մեզ
և հեռվում շրջան անելով նորից մոտե-
ւում մեզ ավելի ու ավելի... բայց երկա-
տի վազեց, անցավ, Անին սուղվեց
ուրների հետ...

— Այո, շարունակեց Թորամանյանը.
կար տարիներ պիտի աշխատեմ այնտեղ,
և կյանքիս ընթացքում. սակայն մի

կյանքն էլ կարճ է Անիի անսահման դան-
ձերն ուսումնասիրելու համար:

Այս սկզբնորված խոսեց իր ծրագրնե-
րի մասին— մեծ, ստեղծագործ ծրագրներ
— մի նոր աշխարհ բանալ մեր արվեստի
սրտմուկության մեջ, պանծացնել մեք հոյա-
կադ ճարտարապետությունը:

Ես խանդավառված լսում էի նրան,
հուզելիտիվեց նա աչքիս և շատ արժեքա-
վորվեց:

Թ. Թորամանյանը ձմեռները դրեթև
միշտ ապրում էր Ալեքսպոլում: Այնտեղ
դասավորում էր իր հավաքած նյութերը,
պրում էր իր ուսումնասիրությունները նը-
րանցից ծագած արդյունքների, եզրակա-
ցությունների մասին:

Ալեքսպոլում թեև անտեսում էին նրան
հարուստ շրջանները, սակայն մտախորա-
կանները հարում էին նրան, մանավանդ
նա շատ սիրված ու ղեհհատված էր
քաղաքի արհեստավորներից, մասնավորա-
պես, որմնադիր վարպետներից, որոնց
հոգևոր շատ ասարածված էր Անդրկովկա-
սում:

Հաճախ տեսնում էի նրան Ժողովրդա-
կան սրճարաններում համբավավոր վար-
պետների հետ զրույցի մեջ շինարարական
արվեստի վերաբերյալ:

Եվ պիտի ասեմ, որ ձմեռնուն ճարա-
րապետը իր դեմքով և շարժումներով պը-
թե լիք տարբերվում ուսում շատած, այս-
պես ասած տնարույս, ավանդապահ վար-
պետներից— մաղուտ երես, անխնամ հա-
ղուստ, գունավոր մեծ թաղիկնակ, ծխա-
խոտի փողովրդական տուրի ու սարք...

Մեր վարպետները խորին հարգանքով
տեղ էին տալիս նրան՝ վերի գյուխը որճա-
րաններում և իրենց հարկերի տակ և ճար-
տարապետ էին կոչում նրան:

«Ճարտարապետն եկավ»:
 «Ճարտարապետ, ի՞նչ կուզես»:
 «Ճարտարապետին սուրճ բերեք»:

Կային մարդիկ, որ չգիտեին նրա իսկական անունը: Իր կոչումի անունով էին ճանաչում նրան:

Իսկ Անիի և ուրիշ ավերակների մոտ և հեռու գյուղերում կարծում էին, թե «Ճարտարապետ» հատուկ անուն է:

Օղել են դեպքեր, որ գյուղերում նորածինների անունը Ճարտարապետ են դրել:

Ճարտարապետը, — ես էլ բարձության պես, յուրացրել էի այս ձևը, — 1903 և 1905-6 թվականներից սկսած աշխատում էր Անիի մեջ և շրջակայքում, Կամսարականների Շիրակում, Մաղասարերդ, Հոռոմոսի վանք, Տեկոր, Մրան, Բաղձայր, Բազրան...:

Այդ թվականները և մանավանդ Հաջորդող տարիները Անիի պեղումների և հուշարձանների հետադրուման հերոսական շրջանն էր, որ բացել էր մեծահռչակ գիտնական ակադեմիկոս Մառը իր ուսև և Հայ աշակերտներով, որոնց մեջն էր հետազայի մեր տաղանդավոր ակադեմիկոս Հովսեփ Աբղարի Օրբելին:

Սա Հաճախակի այցելում էի Անիին, Համարյա ամեն տարի, երբեմն տարին մի երկու անգամ:

Ճարտարապետը շատ էր սիրում լավ որակի սուրճ և ծխախոտ, ինչպես և Անիի վանահայր սքանչելի Միքայել վարդապետը:

Սրբազան պարտականութունն է, որ գտնե մի երկու խոտորով պատմության Համար արձանագրենք Անիի ավերակների այս անձնվեր պահապանի անունը, որ սրտադին սիրում էր ճարտարապետին, նրա հետ կիսում էր իր Հացը, խնամում, հոգում էր նրա կարիքները: Երախտապարտ ենք այս անհայտ, մեծահույզ մարդու հանդեպ:

Պարման էինք կապել մեր միջև, որ ես նարտարապետին և վարդապետին սուրճ և ծխախոտ տանեմ, իսկ նրանք կերակրեն ինձ Անիում եղած ժամանակս:

Ա՛մոռոտնայի գեղեցիկ պահեր եմ ապրել նրանց հետ չքնաղ Անիի մեջ:

Մի տարի այնտեղ էր տաղանդավոր դերասան մեր սիրելի Վրույրը, որ լուսանկարում էր մայրաքաղաքիս հուշարձանները:

Երեքով միասին էինք շարունակ թափառումների, դեզերումների բոլոր ժամանակ:

Երկուսն էլ շափաղանց հանելի ընկերներ էին՝ պվարթ, սրամիտ, կատակասեր: Մի շարաթաչափ մնում էի նրանց հետ և ցավով բաժանվում էի խոսք տալով նորից գալու և կատարում էի խոստումս: Այնքան քաղցր էր նրանց ընկերակցութունը նրանց գործերի հմայիչ մթնոլորտի մեջ:

Երբ լինում էի Անի, վաղ առավոտից սկսած մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարկ արևի տակ, ոգնում էի նրանց գործիքները տանելիս, սարքելիս և ուրիշ բաների մեջ: Կեսօրին դառնում էինք տուն ճաշելու: Միքայել վարդապետը պատրաստել էր ճաշը, սեղանը բացել և սպասում էր մեզ: Հանդուժում էինք ճաշից հետո և նորից գործի անցնում: Իսկ երեկոները մինչև ուշ գիշեր նստում էինք բացօթյա, ծրխում, սուրճ խմում և անվերջ զրույց անում:

Երբեմն լինում էինք ակադեմիկոս Մառի մոտ, երբ մեծ գիտնականը հանգստանում էր ամբողջ օրվա աշխատանքից հետո և սիրով զրույց էր անում մեզ հետ:

Մի օր ճարտարապետը շափում ու գրծում էր Անիի ծիրի մեջ դանվող «Հովվի» փոքրիկ եկեղեցին, իսկ Վրույրը լուսանկարում էր:

— Այս եկեղեցին պատիկ մի գտնար է. նմանը չունի, թայց դժբախտաբար շատ է խարխլած և իսպառ կործանվելու վրա է: — Թափփնով ասաց ճարտարապետը. — արդյոք չե՞՞ս կարող Արեգ-արքում մի հանձնաժողով կազմել, դրամ հավաքել, որով կարելի լինի որոշ տեղեր կարկատել, նեցուկներ դնել, որ չմեռնի: Ախրոս է: Ի՞նչ ես ասում. մի լավ մտածիր: Եստ փող պետք է:

Նրա ամենից քաղցր ձայնով ասած այս խոտքը բնավ մտածել չարկեց ինձ: Խոսք

տվի կատարել, սիրելի բարեկամիս փափա-
 դը: Եվ Արեգ-պոլում քաղաքացիներ Նիկո-
 դայոս կարապետյանի և Վաղարշակ Ատե-
 փանյանի հետ իսկույն հայաքեցիք մոտ
 1000 անդամ: Սա հեքիաթային նվեր եղավ
 ճարտարապետի համար, որ անմիջապես
 դործադրեց պատիկ Գուհարի պահպանման
 նպատակին:

Առաջի, որ Երեկոները զրույց կինք ա-
 նում. բնականաբար, մեծ մասով զրույցը
 Անիի պատմութեան և հայ ճարտարապե-
 տութեան մասին էր լինում:

Անհուն հմտութեան ունեւ նա աղբերի
 կատուցողական արվեստի մասին. համեմա-
 տում էր դանտոյան ոճեր իրար հետ և դուրս
 բերում ոճերի ծաղումները, բնաշրջումներ-
 րը, փոխադարձ աղբերութեանները: Այցե-
 լած, ուսումնասիրած լինելով մեր կոթող-
 ները և հուշարձանները բազմաթիվ վայրե-
 րում նա սպասուի կերպով խորամտիս էր
 եղել մեր նախնիքների շինարարական ար-
 վեստի կոթեան մեջ: Նա ընդհուպ մտտե-
 ցել էր հայ արվեստի արժանատիներին, որ
 պանջում են հայկական բնաշխարհում. նա
 պեղել, փորհրել էր, հետազոտել էր հնա-
 դույն արժանատիները, որոնցով սնվել և
 բարձրացել է հայ մեծ արվեստի շենքը:
 Այսպիսով մեր արվեստի միտտիկան, նրա
 մթամած խորհուրդները մերկացած էին
 նրա սրբապետ, թափանցող փմացականու-
 թեան ատաղ:

Մեր բնաշխարհի ավեր կամ կիսավեր
 շենքերը շոշափել էր նա, չափել, գծել,
 համեմատել, համագրել: Եվ դեռ, դեռ,
 բյուրեղացրել էր հայկականը, ինքնահա-
 տուկը, աղբայինը, հայ անհատականը: Եվ
 տիրապետ կուե-կուիել էր իր հոյակապ
 տեսութեանը հայ արվեստի նկատմամբ:
 Շատ կարգացված և լավ մարմնաված գրքի
 պես դոց պիտեւ նա մեր արվեստի բոլոր
 էջերը, նույնիսկ տառերը, շենքերի սյուներ-
 րը, պատվանդանները, խոյակները, կա-
 մարների և դմբեթների ձևերը, քանդակնե-
 րը, զարդանկարները և ամեն մի բեկորը:

Եվ ամենը տեղին ու անթերի:

Իսկ Անի՞ն ... Անին նրա համար ապ-
 րող, շնչող իրականութեան էր: Անիի ան-

ցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. նա
 տեսնում էր անցած իրերը, դեպքերը,
 պատկերները: Լսում էր անցյալի ձայնը,
 զրույց էր անցյալը:

Անիում նրա համար մեռած կամ կի-
 սամեւ կամ փլատակ բան չկար: Բոլորը
 պարիսպներով, տաճարներով, բուրգերով,
 աշտարակներով, բոլորը նրա առաջ լրիվ
 կանուղուն էին անթերի և կատարյալ, որով-
 չէտե բոլորը նա վերակառուցել էր ար-
 վեստապետի իր հրաշագործ և ճշգրիտ ե-
 րեսակալութեան մեջ: Կարծես նա աչքով
 տեսել էր այս հոյակապ շենքերի կատուցող
 վարպետներին, խոսել էր նրանց հետ, ա-
 շակերտել էր, միասին աշխատել, և այս-
 պիսով սրացել էր նրանց վարպետութեան
 դազանիքները: Ականատեսը և դործակիցը
 միայն կարող էր լրիվ այսքան դիմենալ:

Եթե շեմ մոռացել, նա դիտեւ բացի
 Տրդատ հանձարեղ ճարտարապետից նաև
 մյուս վարպետների անունները և նրանց
 սիմվոլները:

Եթե ճարտարապետութեանը քարացած
 երաժշտութեան է, ապա Թորոս ճարտա-
 րապետը այդ քարացածը վերածել էր կեն-
 դանի երգի: Նա մեր հոյակապ ավերակնե-
 րի և հուշարձանների նույնքան հոյակապ
 երգիչն է:

Շիշում եմ մի անստանալի, նվիրա-
 կան պահ: Ուշ երեկո է, հայկական բարձ-
 րափանդակի օդոստոսյան անբացատրելի
 պայծաս դիչեր, լիալուսին, իսկական լու-
 սին— արծաթ ու բյուրեղ: Նստել էինք
 Մայր եկեղեցու հանդեպ, քարե մի սեղանի
 առաջ: Արջո-Առիջ լիոններից (Այաճա)
 հոսում է մի դով, մեղմ, կազուրբիչ հով՝
 Շիրակի դաշտերի հոտավետ շոր խոտերի,
 ծեթրոնի և վայրի ծաղիկների բույրը հե-
 տը բերելով: Ենկնկում է հովը ավերակ-
 ների մեջ, փսփսում է, խոսում է սրտիդ
 հետ: Հովը չի խոսում, ոգիացած ավե-
 րակների հինավուրց քարերն են խոսում
 սրտիդ հետ, դադափարացած, իմաստափո-
 րած քարերը, փսմացած և հավերժացած
 քարերը...

Եթե ամեն շենք անվերջ և լուս անք քա-
 դաքների մայր Անիի դիչերային լուսութեան

մեջ: Սուղվել ենք մի երազային տրամադրութեան մեջ:

Անին արդեն ինքնին տրամադրութուն է:

Շեն և աղմկայից աշխարհից կտրված, ամայութեան և լուսութեան մեջ մեկուսացած, նա կախարդում է զեզ, դերում է, տիրապետում է հոգուդ և ողողում է զեզ մի հատուկ տրամադրութեամբ: Երբ իրոք սասցող պարտիպներից ներս եմ մտնում հնադարյան զաղաքը, առօրյա իրականութիւնը հեռանում է զեզնից և ոչնչանում, և տեղափոխվում եմ վայրկենաբար, անցբայի մեջ, հին տեսիլներին:

Ամեն մի այցելու իր պատմական դիտելիքների և երևակայութեան ուժի շագօղ սիրում է պատկերացնել վաղուցվա անցյալը, կենդանացնել նրան և ապրել նրա ապրած կյանքով:

Նայում եմ Մայր եկեղեցուն, որը լուսնի անրջային լույսի տակ ուրու է դառել զեղեցիկ, անծայր զեղեցիկ, աննյութացած, որ թվում է թե ահա թռչելու է վերի, երկնքի անհունի մեջ. զնայու Պլատոնի զաղափարները—իդեաները —աշխարհը, նստելու այնտեղ անմահ, հավերժական, կատարյալ ձևերի, նախատիպերի կողքին, իր զահի վրա, որից իջել էր ներքև, հայոց երկրի վրա:

Ձեռքս մեկնելով տաճարին ասում եմ.

— Գեղեցիկը այժման կլինի, ճարտարապետ. սա մեր Պարթեմունն է:

— Ճշմարիտ է. միայն այն տարբերութեամբ, որ Պարթեմունը մարմարեանից է, իսկ մերը հայկական համեստ արձաքից:

Լուսութունը խզվել էր արդեն, և թորոս ճարտարապետն իր թափ, անդորր և խորունկ ճաշով սկսեց խոսել մեր պոլիտիկա մասին:

— Մեր արվեստը, ասաց նա, անարդար կերպով անտեսված է, բայց նա իր արժանավայել տեղը գրաված է, ուզենան յուզենան: Եվրոպան իրենից դուրս կամ հոոր ազգերի արվեստից դուրս բան չի ճար նայում: Հայն ի՞նչ է, որ պոլիտիկա ունենա... այսպես են մտածում նրանք: Թող

այդպես մտածեն, մենք մեր գործը կտեսնենք:

— Հայերը են դիտից կառուցող են եղած:

Արարածն ու Մանու երկրները, որոնց միացումով թերևս սերել է Արմինի, Արմենի երկրանունը, լի են հոյակապ շենքերով, որոնց մնացորդները տեսնում ենք մենք վան-Տոսպում, Սեվանի ափերում և այլուր...

Հայերը այդ նախահայրերից մտանգել են շինարարութեան արվեստը: Քարաշատ Հայաստանը մեր ճարտարներին և վարպետներին տվել է անսպառ նյութ: Մեր քարակափները, մեր որմնադիրները իրենց մեռքի ասկ ունեցել են մի կերպրնկալ, հլու միջոց—մեր հրաբխային քարերը, որոնց հետ խաղացել են մերոնք և ցանկացած միջև տվել, կաղապարել նրանց:

Մեր ժողովուրդը այդ հլու, հնազանդ նյութի մեջ մարմնացրել է իր հոգին, բաղձանքները, երազները, ճաշակը...

— Ի՞նչպես է ստեղծվել մեր արվեստը:

Դա իր պատմութեանն ունի, որ կարելի է պատմել հանգրվան առ հանգրվան, դար առ դար: Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախահայրերից որոշ հիմքեր, խառնել է նրանց հետ տարբերից բոլորած նորութեաններ, կրել է նաև ազդեցութեաններ հարևաններից՝ պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր ունեցածի հետ արվեստներով նոր տարրեր, նոր գոյութեաններ: Համաձայնեցրել է շինանյութերի հետ, կլիմայի հետ. ներդաշնակել է բնակարար—պեյզաժի—հետ և իր մտավոր, հոգեկան, կենցաղային պահանջներին հետ:

Եվ, այսպիսով, ստեղծվել է դարերի շանքով և կուտակումով հայկական ոճը՝ ինքնուրույն կնիք, որ այլևս անբեկանելի է:

— Անին հայկական մշակույթի հայելին է: Լավ նայիր Մայր եկեղեցուն, հայնցարար նայիր. նա մեր ոճի ոգին է: Տե՛ս, ի՞նչքան վսեմ է, որովհետև պարզ է: Պարզ է, որովհետև նա մաղվել է դարավոր

մշակույթի միջոց, գտնել, թոթափել է վրայից ավելորդ բաները, դառնել է բյուրեղ:

— Երբ նստում ես Մայր եկեղեցուն կամ Տեկորի, Երեբույքի, Հոփսիսիճեի տաճարների, թվում է թե լուսեղեն տեսիլքի մեջ տեսնում ես նրանց: Ուրիշ ազգերի արվեստների դեղեցկությունը հուզիչ է, հաճախ գրգռող և խուզիչ, իսկ մեր արվեստի դեղեցկությունը անգործող է, հանդասանող, հայեցողության տանող:

— Այս է հայ ճարտարապետական արվեստի էությունը, նրա փոխհասկացությունը:

— Երբ արդեն կատարյալ մարմին առավ մեր ոճը, սկսեց ճառագայթել:

Մեր քարքարոտ բարձրամանդակից իջան, տարածվեցին մեր արվեստի շնորհները զեպի Բալկանները, Բյուզանդիոն, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Մեր դադթական վարպետները, մեր թոնդրակեցի հալածական ճարտարները արշավող ազգերը տարան այդ շնորհները, որոնք եղան ներշնչման, մտածման, նմանություն, թելադրման և նորությունների աղբակներ բյուզանդական, դոթիկ, ոսմանական և նույնիսկ արարական արվեստների համար:

— Սա շատ ծանր խնդիր է, որ Եվրոպան դժվարություններ պիտի ընդունէ, իր պատվին չի կերցնե, անշուշտ, բայց իրողությունը պիտի հաղթանակի:

— Մի բան պարզ է մեծամիտ Եվրոպայի համար, որ հայերի արվեստը բնավ կախված չէ եղել վերև հիշված արվեստներից, որովհետև նրանցից առաջ գոյություն է ունեցել:

— Իմ տեսակետով ազդեցություն հարցը երկրորդական է, բախական է, որ մեր արվեստը իր անժխտելի տեղն ունի ընդհանուր աղբերի ճարտարապետական արվեստի պատմության մեջ:

— Սրանով ես հպարտ եմ և մխիթարված:

Թորոս ճարտարապետը այսպես վերջացրեց իր խոսքը:

Երբ ես հիացած նայեցի նրան, նա դեմքը հատել էր Մայր եկեղեցուն, կարծես

վերացած, լուսթյան մեջ, հիմա էլ հոգով խոսում էր Մայր եկեղեցու հետ, հայոց ճարտարապետության ոգու հետ:

Եվ մտածում էի՝ ի՞նչպես այն քաջված, անշուք Թորոս Թորամանյանը իր «խրալի գործով բոլոր ժամանակներին հայ ժողովրդի համար դառավ Թորոս ճարտարապետ, և մեծացավ, պատմականացավ, անմահացավ:

Երբ 1926 թվին Եվրոպայից վերադարձա հայրենիք, մոտ 15 տարի կար, որ ճատարապետին չէի տեսել, ժամանակն իր դաժան գործը տեսել էր— Ծերացել էր նա, սպիտակել, շատ պարարտացել էր և սիրտը հողնել էր, բայց տրամադրությունը բարձր էր. նույն լավատես, տոկուն, համով, պարզասիրտ մարդն էր:

Նոր էր ապաքինվել ավտոյի մի ծանր արկածից, որից կրած սարսափի և ցավերի մասին պատմում էր ծիծաղով: Շարունակ անդրադառնում էր իր ձեռագրերի, նկարների, դձագրությունների մի մասին անդանակի կորստի մասին, որ պատահել էր թուրք բանակի Շիրակ և Ալեքսանդր ներխուժման ժամանակ: Երբ հիշում էր աչք աղծտը, դեմքը մկրում էր ցավազնորեն, հոնքերը ավելի էին թանձրանում աչքերի վրա, որ արցունք էի տեսնում:

Արդեն ձեռնամուխ էր եղել իր հոյսկապ գործին — ձևություն հայ ճարտարապետության պատմության, որի համար աստաղել, նահատակվել էր նա իր ողջ կյանքում, մի մոնումենտալ գործ, ուր պիտի խտանային իր բոլոր հայտնությունները, մեր արվեստի վերաբերյալ իր պանծալի տեսությունը հիմնավորումը:

Անսահման նյութ ուներ կուտակած քառասյին միջակի մեջ, որին պիտի հաղթահարեր այդ մեծ մոնումենտը կառուցելու համար: Սարսափ էր պատում ինձ, երբ նստում էի թղթերի, նկարների, դձագրումների այդ հսկա գեղին, բայց նա եսանդով և սիրով, համբերությամբ օրեցօր կարդի և մեկ էր դնում այդ քառքը, միևնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեղումների մասնակցելու, նոր նյութեր կուտակելու:

Հիշում եմ, 1929 թվին ինչպիսի երբև-
տատարդական ափյունով իր մտերիմ ընկեր
մեծադուխ ճարտարապետ Ալեքսանդր Թա-
մանյանի հետ զնաց Երեբունյի նշանալիոր
բաղելիքը նորոգելու նախապատրաստական
աշխատանքների համար «Հայաստանի Հնու-
թյունների պահպանման կոմիտեի» կողմից:

1930 թվին, դարնանը, վերստին արտա-
ուստան մեկնելիս «մնաք բարեի» զնացի
ճարտարապետին, Վաղարշապատ: Գիշերե-
ցի մտքը: Միասին զնացինք Ձվարթնոց:

Ուղեցի Թերևս վերջին անգամ տեսնելու
այս անկրկնելի դեղեցկութունը:

(Երկար դեղերեցինք Ձվարթնոցի շուր-
ջը:

Թորոս ճարտարապետը բացատրում էր
հին ու հետագա պեղումների արդյունքների
մասին: Սոսում էր, խոսում և չէր հաղե-
նում, որովհետև նյութը Ձվարթնոցն էր:

Ավա՛ղ, այս վերջին անգամն էր, որ
տեսա նրան, եղա նրա հետ:

Ա.Վ. ԻՍԵՆԱԿՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՉՏՅՈՒՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ ¹

«Հայրենասիրութիւն մի անկշիռ եւ գերարգոտ առաքինութիւն է եւ իսկական բարոյաց քուն տքմաստ»:

Գ. ՍՐՎԱՆՉՏՅՈՒՆ

Բ.

Տարոնում, որտեղ խմբագրում էր «Արծուիկ Տարոնոյ» կիսամսյա թերթը, Գ. Սրվանձտյանը կատարեց իր վրա զրգած ծանր պարտականութիւնները: Գա Ս. Կարապետի վանքի միաբանութեան մեջ ծառայած փոթորիկների շրջանն էր: Մշտ Բողոքողին դեպի լուսը առաջնորդելու շրջանը, մի կողմից՝ Հետադիմական Մամբրե Զաքարյանականների, մյուս կողմից՝ լուսավորչայների, Խրիմյանականների կատաղի պայքարի շրջանը:

1860-ական թվականներին Մշտ դաշտի Հայ Բողոքողները ծանր Հարկերից ու Հարթապահարութիւններից սովի էր մատնորված:

Ազգային ցեղերի Հետ միաժամանակ դուռըացու արյունն էին ծծում ամեն կարգի տիրող-դրկողները: Վերջինս միայն մի ելք ունենէր՝ թողնել ամեն ինչ և Հեռանալ...

Մուշը զաղթում էր:

Հայ մամուլը միայն ողբում էր:

Մշտ Ս. Կարապետի վանքում նստած և այդ Բողոքողի շահերի Համար իրենց կյանքը դրած Խրիմյանն ու Սրվանձտյանը կատաղի պայքար էին մղում տեղական անկարօրդանների դեմ, որոնք անտարբեր դիտողի դերում էին միայն: Հայրենասիրներ երկվորյակը տառապանքի մեջ էր: Երկուսն էլ մենակ էին: Սակայն նրանց լավ էր ճանաչում Բողոքողները: Ուստի նրանք ոչ մի առիթ թաց չէին թողնում Բողոքողի մեջ քա-

րուպետ այն միտքը, թե չկա ավելի մեծ թշվառութիւն, քան Հայրենի երկիրը թողնելը և կամավոր աքսորի մատնվելը:

Մուշը տազնապ էր ապրում:

Գաղթականները ծածկել էին ճանապարհները: Տեր ու տիրական չկար, Երազմուրդի գործիչները նրան ոչ մի կեղտօգտակար լինել չէին կարող: Մուշ էր դիմել Ազգային Վարչութեանն ու Բարձրագույն Դրանը: Եւ ահա, 1863 թ. վերջին Գ. Սրվանձտյանը Կ. Պոլսում էր «Աղերս առ Ազգային Վարչութեան» աղերսագիրը ձեռքին: Ամբողջովին սիրտ և զգացմունք դարձած Սրվանձտյանը դրում էր.

«Տարոնն նոր կու դամ, վկա այն ամեն թշվառութեանց և աղետից, որ կը կրեն դավառայինք... եկած եմ մեր աշխարհներու վշտաց և ցավոց թարգման կամ դուժկան. վիշտեր, որոց տեսակները բյուրավոր են և որոց զոհ եղողները Հազարավոր: Տարոնի ճոցն միայն այս Ժամանակ 600-են ավելի տուներ դաղթեցան անիրաւաց ձեռքն, անխիղճներու երեսն, անկարգութեան և անտիրութեան Համար... Տարոն իր զավակներով Հիվանդ և Հողեւարք է, այս ցավալից լուրը Հառաջուց բերավ ձեզ ողբասաց «Արծուիկն» յուր: Ուստի թիշիկ և դարձանիչ Հասուցեք իրեն: Ապա թե ոչ որի՞ն երեսփոխան պատի անխանկթիք, որի՞ն վարիչ, որի՞ն տնո»

¹ Սկիզբը տես «Էջմիածին», փետրվար-մարտ, 1944.

րեն, Հայաստանի անբնակ հողերուն, ամա-
յի տեղերուն»¹ :

Այնուհետև խոսքն ուղղելով դավառա-
կան ցեղերին, գրում էր, թե նրանք այն-
պիսի խեղկատակներ են, որ ոչ միայն տե-
ղական ղեկավարներին, այլև նույնիսկ Ադ-
գային Վարչութիւնին էլ պիտի խնն բո-
լոր իրավունքները: Սահմանադրութիւնը,
գրում էր նա, այդ անխիղճների համար
ոչնչութիւն է և քանի կան նրանք, չի
գործադրվելու օրենքը գյուղական վայրե-
րում: Այդ պատճառով Սրվանձտյանը պա-
հանջում էր՝ «...Սահմանադրութիւնն էտ
մարդ և մարդու հետ արտոնութիւն տալ,
պատրաստել, հանել ի դավառներ, մարդ,
որ նրթա գմարգ մարդոց ճանկեն աղատե,
մարդ՝ որ երթա մարդկութիւն իրավունքը
և սահմանադրութիւն սկզբունքը նորոգ
հաստատե»² :

Շարունակելով բողոքը, նա ավելաց-
նում է.

«Պորտ մանրախույլ խնդիրներու ժա-
մանակը չէ հլմա, անդին ահագին ալ-
խարհներ ձեռքե կերթան. ձեք օրով
կերթան...»

«...Ո՛հ, թերևս այնպես չեն լմբոներ
ձեք մտքերը Հայաստանցիոց վշտաց
պատկերը, թերևս չեն զգար այնպես,
ինչպես անոնք, որ անձամբ հաղորդ և
ակննատես են եղեր այն աղետներուն,
որոնցմե մեկն ալ ահա ես եմ...»

«...Մուշր մշավ, Տարոնը տարան. ա-
նոր բնակիչները հետզհետե փախան,
չատերն անոթութենէ մեռան... վերջին
գութաբերին կուպսեք, որ դա և դու-
ժե, թե ահա Տարոնո տունը ամբողջ
փլավ, և յուր որդիք տակը մնալով
ողջ ողջ մտան դերերդմանը...»³ :

Ժողովրդի շահերովն ու խոհերովն ասպ-
րող Սրվանձտյանը այս բողոքների համար
ենթարկվեց էլ ավելի անտանելի հարա-
ժանքների: Ուստի թողած Ս. Կարապետի
վանքի իր պաշտոնները նա առժամանակ
նահանջ կատարեց: Այլ ինչպես որ վիճակ-
ված էր նրան, այցելեց գաղթող ժողովրդը

դին. հորդորեց նրան վայրերում մնալ և
նորից չպոկվել: Տեսածն ու լսածը նա գրի
կը հառաչես սրտիդ խորերին.
«Ո՛ւր է զո սեղան, մշեցի հայ, ինչո՞ւ
խնճույք չես կազմեր: Արարածները
բոլոր կը ցնձան հուսով նոր տարին
չնորհալորելով. բայց դու կհառաչես,
կը հառաչես սրտիդ խորերին. —
...Լաց և արատուք փոխանակ եր-
գոց և զգարճութիւնց կը մատուցանե
մշեցի հայն նոր տարվույն տունին, հոն
մանկամարդ մայր մը յուր մեկ զավա-
կին նայելով կը հեծեծե, հոս այրին իր
որբը գրկած միասին կողքան ու կմը-
կտան. այնտեղ նոր հարսը մեկ ձեռքը
իր կուրծքին վրա, մյուսը աչերուն
վրա դրած միայնակ նստեր ցուրտ և
դատարկ տան անկյունը կը դողդողա
և իր փեսայի պանդխտութիւնը կհիշե
ու կողբա: «... Իր խրճիթը ծածկող
պերանձնին ալ տոկոս դրոված են, իր
զավակին ժառանգութիւն ի՞նչ պիտի
թող տա, պա՛րտք, աշխատութիւն,
բամա, սուղամեք, արտասու՛ւք մինչև
մահվան օրը, ջրտինք հեղեղի պես և
անոր մեկ կաթիլն անպամ իրեն բաժի-
նը չէ: Թե՛՛ծ ոսկորները փշթելու չափ,
ստրկութիւն քան զգերութիւն պե՛շ վի-
ճակ»⁴ :

Այս տխուր տոյքերը, որ Գ. Սրվանձ-
տյանի Մշո դաշտի մի ընդարձակ նկա-
րազրութիւն հատվածներն են, իր ժամա-
նակին մեծ արժուկ հանեցին: Ոչ միայն
գավառական Հայ և թուրք օրգանները,
այլև Օսմանյան պետութիւնն էլ զգաց
կործանարար քաղաքականութիւնը,
որի հետևանքով Հայ դյուղացին դարձավ բնա-
վեր: Բայց և այս բանի հետևանքով էլ
Գ. Սրվանձտյանը ստնկեց դադունի հսկո-
ղութիւն տակ հենց Պոլսի կողմից: Սակայն
Սրվանձտյանը տոկուն կամ չի շնորհիվ հու-
սախարութիւն չսպրեց: Ընդհակառակը,
բոլոր ժամանակ նա յուրայիններին հորդո-
րում էր դարձել, իսկ ներքան երջանկացնե-
լու համար պահանջում էր լավ ուսումնա-

¹ Ժամանակ նահե, 1864, № 27, էջ 8.
² Ժամանակ նահե, 1864, № 27, էջ 8.
³ Նույն:

⁴ Ա. Գրիգորյան, «Մշակ Հայ մատենագրու-
թիւն» 1870:

սիրելի մեր ժողովրդի պատմական անցյալը, հետևել առողջ տրադիցիաներին, կյանքը դրավ դնել Հայրենիքի համար:

Նա հայոց պատմութունը լավ ուսած լինելով անդադրական նկարագրութունները ու հայրենի ստասպելները ընթերցողին ներկայացնելիս հաճախ վկայակոչում էր մեր պատմիչներին: Ապա նոր սերնդին հայրենասիրական ողջով դաստիարակելու նպատակով ամեն առիթ օգտագործում էր օգեշնչելու Հայրենիքի սիրո դադավորը:

«Գրոց-Բրոց»-ում նկարագրելով Հայրենի երկրի սուրբ հողը, որ դուրգուրանքով պրկել են քաջ նախնիների մարմինները, ծայրերում պահել է մեր լանցած ու գնացած շին ու ավերակները, որի վրա մինչ այսօր էլ կանդուն են մեր վկայարաններն ու կոթողները, Սրվանձալանը բացահանչում է. «Ա՛հ, որչափ անձա՛հ և պանծայի հիշատակներ պե՛տ կենդանի ունի մեր Հայրենիքը»:

Սրվանձալանն իրեն հատուկ յուժորով ծաղրեց օտարամոլ՝ և մայրենի բարբառը չսիրող այն ազգայիններին, որոնք կրթութուն ստանալով հիփոսոպյում, Եսիրեցին դայն, հարմարեցան անոնց, և հետս թողին իրենց բնիկն, հայրենին, ազգայինն ու բնուանին»:

Ընթերցողին դուռնացնելու նպատակով նա գրում է. «Թե ինքը բնավ նախապաշարված կամ իրենն ուրիշներից թանկ դնա՛ւտողներից չէ՛, ավելին. ինքը շատ բարձր է գնահատում եսրոպական մշակույթը, սակայն եքրեք տեղի չի տա մոտանալու սեփականը՝ ազգայինը»:

Ժամանակի հայ տղին և հայոց լեզուն վատ ուսած պոլոսարնակ ազգայիններին մտրակում էր Սրվանձալանը:

«...Կը Վսոսին այդ պարոններն ու որիորդները քաջ քաջ եսրոպական բնուժը, իսկ հայերենն խոտած ժամանակը կը հանգստին ու կը կանգաին, օժանդակ կը խընդրեն... միևնույն բուպէին մեղադրական մ'ալ՝ ձգելով Հայկականին

վրա, թե—է՛, սա մեր հայերեն լեզուն սրբան պակաս և կրճատ է»:

Գ. Սրվանձալանը լեզուն համարում է այն նախապաշանը, որի վրա պետք է հենվի յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ, ուստի նա պահանջում է չեղվի ճշգրիտ ուսուցումը դպրոցում, սկսած հենց ասալին դասարանից:

Այդ նպատակով նա 1886-ին կազմեց սուտրին դասարանների համար աշխարհարար լեզվով շարագրված մի պասազիրք, որը երկար ժամանակ զործածվում էր Տաճկահայաստանի դպրոցներում:

Լինելով ժամանակի հմուտ մանկավարժներից մեկը, Գարեղին Սրվանձալանը երկար ժամանակ վարեց ուսուցչի և տեսչի պաշտոններ Վարազում, Մուշի Ս. Կարապետի վանքում, Կարսում և Պոլսում: Նա պահանջում էր, որպեսզի մեր դասադրքերը կազմվեն ընտանեկան սովորութունների յուզայի վրա, աշխարհարար, հստակ լեզվով: Որպեսզի մանկան մեջ անդառնալիորեն մշակվեն մայրենի լեզվի տարրերը, նա խնդիր էր հարուցում:

«Բա՛ն այդ սրահեն, բուն աչքեն սկսելու է արդեն ուղղութունը, որուն մեր ազգը կարեփորութուն շտար և շտարով ալ կարող չլինե՛ր զինքն ուղղել, յուղղելով կարող չլինե՛ր հառաջ բնթանալ: Այո՛, ամեն բանը սկզբին, այրեն, մանուկեն, առաջին սրահեն ուղղելու ենք: Գոտադրքեր պետք են մանուկներուն պատշաճ, հասկանալի և սիրելի բառերով և սոտրկաներով...»:

Նա մանկավարժներից պահանջում էր նաև, որ նրանք աշխարհապարհական դիտելիքների ուսուցումն սկսեն տվյալ վայրից՝ տնից ու փողոցից, մինչև հայրենի հետափոր բերդերն ու ավերակները, որոնք թո՛ղ միայն դվարճալի և պիտանի կլինեն ուսանողին, այլ, և նոր ու մեծ յույս կուտան մեր հայկական լեզվին, մեր ազգային հրնագիտության ու պատմության, որք յի են թյուր հասկացողությամբ»:

Սրվանձալանի մանկավարժական դադափարները ժամանակին ըմբռնեց և կյան-

1 «Գրոց-Բրոց», էջ 17.

1 Նույն, էջ 17—18.
2 «Գրոց-Բրոց», էջ 20—21.
3 Նույն, էջ 22—23.

բում փրագործելի դարձրեց մանկավարժ Սեդրակ Մանգլինյանը: Նա պարզապես «Գրոց-Բրոցը» դարձրեց դպրոցի առաջին աստիճանի դասադիրքը, կրճատելով այն ու արեվելաձայ գրական լեզվի վերածելով: Այդ դասադիրքով սերունդներ դաստիարակվեցին: Այս դասադիրքի առաջին և կարելիոր ժամը, «Սասունցի Դավիթը» կամ Մհերի դուռնն է կազմում: Արա ճարհիվ մեր էպոսը արագ մասսայականացավ:

Փիտակցված Հայրենասիրությունն էր պատճառը, որ Սրվանձտյանին մղում էր դեպի ազդագրությունն ու ժողովրդական բանահյուսությունը: «Սասունցի Դավիթը» առաջին անգամ նա դրի առաջ ոչ պատահականորեն, այլ խորապես զգալով նրա նշանակությունը:

«Այս դործիս («Սասունցի Դավիթ» վ. Բ.) հրատարակությունը Հասկացողին համար արժեք կունենա, բայց կարծեմ արհամարողներ ավելի պիտի լինեն և այսպանողներ, ոչ միայն այս գրվածքին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդ որ և իմ անձը» Ասունք ճակատագրողներն են: Բայց մեր փուլեր չէ: Քաջալերված կը Համարիմ դեռ եթե համբանքով թսան Հոգի և եթ լինեն Հավանող այս գործույթ, և կը շարունակեմ, խրախուսյալ տալով այլոց, որ հերոսին, աշխատասիրեմ ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները»:

Բայց ինչպես ակադեմ. Մ. Աբեղյանն է նկատում, Սրվանձտյանը սխալվում էր: Նրան փրախուսեցին բոլորը: «Սասունցի Դավիթը» Հանդիսացավ Հայ Հերոսական բանաստեղծության Հիմնական ակունքներից մեկը: Հայկական էպոսը նրա գրի առնելուց հետո միայն դարձավ Հայ դիտական մտքի զբաղման առարկա:

Պատմականի և առասպելականի գեղը լիովին Հասկանալով էր, որ Սրվանձտյանը ոչ միայն «փորփրում», այլև առաջարկում էր ամենքին «հողերու իսպերը, ջրերու իտրերը, շինից փլատակներն ու ավերակները փորփորել և խառնել բոլորով ու զբոլով, և

ազգ յուրաքանչյուր յուր նախնյաց անձանց և արարոց ծանոթ առնել»¹, «Ար, Հարկ է, որ մենք դեկ լաջ ճանաչենք, մեր Հայրերը ճանաչենք, մեր Հայրենիքը ճանաչենք»:

Այս տեսանկյունից ելնելով նա գրի էր տանում մեր Հարուստ Փոլիտրի բնտիր նը՝ մուշները, նկարագրում ազգային սովորությունները, զբքրում էին ձեռագրերը, լույս էր բնծայում պատմական արժեքավոր հիշատակարանները, Հրապարակում ձեռագրերի մեջ դարհրով պահված և մեր բանասիրությունն ու ժողովրդին անհայտ Հայ միջնադարյան տաղերգուների գործերը և այլն: Այս բոլորի ուսումնասիրությունը նա անհրաժեշտ էր Համարում օրպես «գողափարները բեղմնավորելու» ճշմարիտ միջոց:

«Վը զարհուրիմ ասել, գրում էր նա, «զրոյ և ընթերցողներ ունինք բավակա նին շատ, սակայն անոնցմե շատերն անգետ են ազգային Հին պատմության և ներկա կենցաղավարություն. ներքի ինձ ասել, թե անգետ են նաև անոնցմե շատերն, որ այսօր ազգային օրենսդրի կամ կառավարողի պաշտոն ունին»²:

1877-78 թ. թ. ուս-թուրքական պատերազմը սոսկալի ծանր հետեկանքներ թողեց Թուրքիայի ժողովուրդներին նյութական ու լարտյական կյանքի վրա: Հաղթող տերությունն առնել ծունկի եկած Թուրքիայի գաղաճներում ծնունդ առան անիշխանական արամագրությունները: Երկրի ծայրամասերում միջնադարյան կյանքով ազրող լեռնաբնակ ինքնիշխան ցեղերն ու առհմերը դինված և զագանացած ավերածություններ էին սիրում երկրում: Պատերազմի հետ կապված գեղարությունները լրացնում էին այն բոլոր աստապանքները, որ կրում էին մասնավորապես ջրիտոնյա ժողովուրդները Թուրքիայում:

Նույն այդ վիճակում էր և Հայ ժողովուրդը, որը զուրկ էր կյանքի ու գույքի ապահովությունից: Դրա հետևանքով Հայ ժողովուրդը շատ տեղերում բռնել էր արդեն գաղթի ճանապարհը: Դա կատարվում

¹ Գրոց ու Բրոց, էջ 131.

¹ Արվանձտեան, «Մանասյ» 1878, էջ 88.
² Նույն, էջ 32.
³ Նույն, էջ 38.

էր հայ մտաւորականութեան քաղաքական անկեղալութեաններէ ախ շրջանում, երբ մեծ հուսով սպասուում էր ազգային ինքնա- վարութեան հաստատումը Բեռլինի վեհա- ժողովում: Եկին օրերը հայկական խնդիրն թե առած սախաններ և հասեր էր Եվրոպիս մեծ տերութեանց դաշխմները և քաղցը հույսեր կանխեր սփուեր էր Հայաստանի սփերականերուն և հայոց ավեր սրտերուն: Հայրենի հողն ու հողուխ հախասարած հայն կենաց նոր շարժում մը կասանայր, գրում էր Սրբանձոյանը «Թորոս Աղբար»- ում»¹:

Տեսեալական-բարոյական ու քաղաքա- կան տատապանքներէ և մեծ հույսերի աչդ օրերին Կ. Պոլսի ախ ժամանակիս պատրի- արք Ներսես Վարժապետանը համաձայ- նութեան ասնելով բարձրագույն Դոմից և- րեք վարդապետ գործուղեց հայկական գա- վառներն սուսամասերելու, ժողովրդի նիտան ու կացը նկարագրելու, դժգոհու- թեաններէ պատճառներն խմանալու, զըտ- բոցներն ու եկեղեցիները հաճախելու, նը- բանց վիճակագրական տվյալները վերցնելու և, սր ամենից կարելորն է, հայ գաղութ- ներին իրենց մտադրութեանից ետ կանդ- նեցնելու նպատակով:

Այդ երեք վարդապետներից մեկը Գ. Սրբանձոյանն էր, որ պիտի անցներ մոտ երկու տասնյակ դավառներ:

Ստանձելով այս պարտականութեանը Գ. Սրբանձոյանը 1878 թ. ապրիլին մեկ- նում է գալտոները:

«Կերթայինք մենք ողջունատար և միխ- թար՝ հուսարեկ հայոց»², գրում էր նա իր այս տասինն ուղեվորութեան օրերին: Նա թողնում էր պճնագարդ Բյուզանդիոնն ու Վուսիտրի սքանչելի ակերբը, որոնք, սա- կայն, ոչ մի բանով հարազատ չէին ուսմ- կական սիրուն իր կրճարում կրող Սրբանձ- տյանին: «Սուար էին անոնք, ես կերթայի հայրենյաց արևն ու դարուեր ողջունելը»³, գրում էր Սրբանձոյանը:

Իր այս նոր պարտականութեան մեջ Սրբանձոյանը ցուցարերեց իրեն հատուկ

նվիրվածութեան, որ բխում էր նրա խառն- վածքից և պարտաճանաչութեան բարձր պիտակցութեանից:

«Հոստարութեամբ գնացի, հոստարու- թեամբ շրջեցա, հոստարութեամբ դոր- ձեցի... Հաղարայր միխթարութեանց կը հանդիպեք մեր հայրենական ջրն- բուն, հովերուն, մարգերուն, դրախտ- ներուն, բերքերուն և պաուղնե- բուն...»⁴:

Նույնպիսի ետնդով Սրբանձոյանը ձեռնարկեց երկրորդ ուղեվորութեանը, որ սեղի ունեցավ հաջորդ 1879 թ. գարնանը: Այս ուղեվորութեանը տեղից մի քանի ա- միս անընդհատ: Նա կրեց տեսակ տեսակ տատապանքներ, անցավ վտանգավոր ճա- նապարհներ, հաղթահարեց ամեն տեսակ խոչընդոտ, մուտք գործեց հայկական և թուրքական դուղերը, տեսով, նկարագրեց ու սրաց հայրենի ժողովրդի ծանր վիճա- կը:

Նա այս երկու ուղեվորութեանը ու- րալ գծեց Հայաստանի քարտեզը: Եղավ այնտեղ, ուր ոչ ոք սիրտ չէր անում լինել, մտով այնտեղ, ուր մահ ու սարսուռ էր սիրում: Ետների նման նա էլ այդ ուղե- վորութեաններէ ընթացքում կաղմեց հանձ- նարարված վիճակագրութեանները, բայց չատերից տարբերվեց նրանով, որ իր պար- տականութեանը շահճանախակեց սոսկ վի- ճակագրութեամբ:

Մանելով հուսարեկ, Վայրենի օջախից իրանած ժողովրդի մեջ, Սրբանձոյանը յուրահատուկ համոզիչ լեզվով կարողանում էր ողեվորել Ա. հուսաղբեյ նրան: Գտնում էր, որ որքան էլ տապակվի որևէ ժող- վորդ, այնուամենայնիվ նրա համար սղա- տութեանն օտարների մոտ չէ: Ազատու- թեանն ու երջանկութեանը, լնչպես ճիշտ պատում է Սրբանձոյանը, մայրենի հողն է, գրտնաջան աշխատանքը և նրա համար համառ պայքարը նվաճողների դեմ: Այս բանում Սրբանձոյանը շատ է հիշեցնում «Երկրագործութեան» հեղինակին:

«Տաղտղը իր բուսած հողին վրա կը հասուննա, մանուկն իր մորը ջերմիկ

¹ Սրբանձո. — Թորոս Աղբար, 1. էջ Բ — Թ.
² Նույն 1, էջ Ը.
³ Նույն, էջ Թ.

⁴ Թորոս-Աղբար 1, էջ ԺԳ.

ծոցը կը դարգանա: Եվ պտուղը հասուննալու, հունձը հնձերու եղանակն ամառն է՝:

Սրվանձայանը լավատես հեղինակներէց էր: Եւ սպասում էր հայ ժողովրդի ազատագրութեանը, նրա դամոսանը: Իր լավատեսութունը սերմանում էր Հայաստանով մեկ:

Եկը ջանայի համոզել զիրեն, (հայերին: Վ. Բ.) թէ ամեն երկիր գիշեր կլինի, խափար կունենա, բայց չէ որ Աստված ամեն օր առափոտ կը բանա, յույս կուտա մեզ, ձմեռվանն հետո կուզա գարուն. ամեն աշնան չորացած, քաշված, արորված ու դոսացած հողը Աստված կրկին կը կանանչացնէ, գարնան արեւով կը հալին ձյուները, կը տաքանան օտքերը, կը ծաղկին դաշտն ու ծառերը, այսօրեւ և մեր վիճակը կնտրողի՞նք: Սրվանձայանը մերժում էր եւրոպական օրինակացիայի սնամեջ դազափարը: Երա համար ազատութիւնը դալու էր իր իսկ ժողովրդից, ներսից, տիրոջներէ զեմ երեսու ճանապարհով, որը սակայն, քացարձակ ձևով ասել չէի կարող:

Երբ Հայաստանի եռյակ պատմիրակութիւնը Մկրտիչ Պրիմբանի գլխաւորութեամբ չըջում էր Եւրոպայում և կամացուկ թիկացնում Բեռլինի ամօթաբեր վեհաժողովի դռները, Հայաստանի շատ քաղաքական զործիչներ հայրազան հարցը լուծված համարելով հրճվանքի օրեր էին ապրում: Բայց այդ հույսերը շարդարացան: Պրիմբանի թղթե դալը մնացել էր քիթիտող հարիսայի կճուճի մեջ...:

Այդ ժամանակ Հայաստանին՝ նրա կեղծ բարեարմենքին քաջամտութ Սրվանձայանը հույսի ոչ մի նշույլ չէր տեսնում եւրոպական օրինակների ճառերի մեջ: Եւ անձամբ շրջելով ինքն իր ճանաչողութիւնը կորցրած ժողովրդի մեջ, արցունքն աչքերին, այդ ժողովրդին կոչ էր անում Վերջապահ կորսված տեղը՝ որոնել, այսինքն քաղաքական հարցերը հենց տեղում որոշել:

Հայաստանի մեքն է բուն ՀԱՅԿԱՅԻՆ խնդիրն, իսկ մենք Պերլինի մեջ կորոնենք դայն՝, դրում էր Սրվանձայանը:

Իսկ մեկ այլ առիթով նա Բեռլինի կոնգրեսի հասցեին ա՛նա թէ ինչպիսի ծաղր է շարտում.

«—Թեպետ դեռափը դեղ մը կար, բայց կարի հոչակյալ էր անոր մոծակաց և լվոց բաղմութիւնն ու բարբարոսութիւնը, աւտի և այլ իրավամբ Պերլինի քոնկլիւսի ինքնավարութիւն և անկախութիւնն աված էր անոնց իրենց սրաշյալ տեղը»² (Ընդդ. իմն է Վ. Բ.):

Դրացի ժողովուրդների միջև աղպային կոիվներ սերմանող օտարազգիների նկատմամբ Սրվանձայանն ունէր որոշակի բացասական կարծիք և յուրաշիններին պուշացնելով համար (որոնք տատապում էին եվրոպական օրինակացիայի հիմնադրութեամբ), գրում էր, թէ նրանք կոիվներ սերմանելուց հետո ճիւղացին, ու ծափ դարկին խաղացիչն, ուստի ավելորդ է հավատ ընծայելը: «Մէջ եղբարք,—չարունակում է գրել նա,—այս չէր մեր ընելիքը... Այդ կեղծ բարեբարմենքն ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մտադործներ, որ զմեզ երև վայրի, պատրաստ ոչխարներու և պարսակ կոպերուն տեղ դնելով մեր փարախեն կուղեին խրտնեցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել»:

Հավերժ կճեա Սրվանձայանի մեջ աքն բարձր մեծահոգութիւնը, որ պայծառ էր Հայաստանի արեւի պես, վճիտ ու խորունկ էր հայրենի լճերի պես: Դա նրա դեպի քրտնաթոր աշխատավորներն ունեցած բարյացկամ վերաբերմունքն էր և՛ հայի և թուրքի, և՛ ջրդի, և՛ չերքեղի նկատմամբ առանց խարութեան: Այտանդ,—մարդ հասկացողութեան այս իսկական աշխարհում,— Սրվանձայանն անգնահատելի մեծութիւն էր, որի անձնավորութիւնը հարող մասսաները նրա անունը լսելիս, Երբ

1 Քորուս Աղբար, Պ 2, էջ 270.
2 Պ 2, էջ 1.
3 Պ 1, 2.

1 Քորուս Աղբար, 1, էջ 270.
2 " 1, էջ 234.
3 " 2, էջ 24-25.

ա այցելում էր դավաճները, որ առաջ, խափորով դիմավորելու էին կենում:

Նա որքես շայտասանի ճամբուրդ, «նախ իր օրերն անց էր կացնում քրդական լքաննեցում և թուրքերի տներում: Նրան արդանքով էին վերաբերվում թե քրդերը, թե թուրքերը: Հաճախ նրան շրջապատելով խուրճ աշխատավորները հարցնում էին աշխարհի խաղաղության, կյանքի լավացման առիթն: Փողստվորդների այս անկեղծ բարեամտից պատկասում էին մինչև իսկ իր թրջամտները:

Սրվանձառյանն իր ուղեվարությունն ընդունեցում նման էր կախարհի գործարարի, որ նախաձեռնությունն ցանկալի խաղաղություն էր տեղեցում այն վայրում, որտեղ ուր էր նույն վնջը:

Աշխատանքի բնույթի և նվիրվածության տեսակետից Գ. Սրվանձառյանն իր էությունից ամենանշանավոր դործիցն է: Մի անգամանք, որ մեր պատմագրության ողորդից խիստ ուշադրավ է և ուսումնասիրության կարտու:

Թև Սրվանձառյանը իրաք ինչ ձայնով արեկամ է ուրիշ ժողովուրդների, այդ տեղում է մի հանդամանքից: Դա քրդերի լայնքը ուսումնասիրելու: Վնդիրն է:

Դեպի այդ ժողովուրդն ունեցած հարսանքի արդասիք պետք է համարել նրա՝ ողական հայտնի ավանդություններից մեկը: «Սարէ Սրվանձ»-ի թարգմանությունը այնքան:

Գ.

«Հայր Հայուն ծանոթացնել, Հայր Հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափաքս ջանքս», գրում էր Սրվանձառյանն իր առաջին ուղեվարության ժամանակ: Այս անգամանքը շատ բարերար ազդեցությունն թողել նրա գեղարվեստական ճաշակի տալ: Դուրսէ ամենից շատ այս հանդամանքն էր պատճառը, որ Սրվանձառյանն իր ուղեվարությունների կամ հենց օրեկ ստեղծարարական ու հավաքական աշխատանքի

ընթացքում կատարում էր լիրիկական գեղումներ:

Ինչպես Ներսես Վարժապետյանի կոնգրակից, նույնպես և Բարձր Դրան հրամանադրից երևում է, որ Սրվանձառյանը գալաններն է մեկնում անտեսական և վիճակադրական միջավայրի հավաքելու նպատակով: Բայց «Հայր Հայուն» ծանոթացնել ցանկացող ուղեվարն իր սահմաններից դուրս գալով աշխարհագրական շոր ու ցամաք նկարագրություններին և վիճակագրական թվերին տալիս է այնպիսի բովանդակություն, որ ընթերցողը մի պահ ժողովուրդով իր վիճակը, բնույթ է հեղինակի փելերից և ինքնամոտացման մեջ ընթանում է նրա հետ այն վայրերը, ուր մի ժամանակ ղեղղեղել է իր անկրկելի աղոթքները Գ. Նարեկացին, ուր սպրել և ստեղծագործել է Ծնորհային, ուր անդ ու անպատան շեն է դարձել միւր հայ մշակի ձեռքով:

Ահա նա շտապում է հասնել հոշակավոր Մովսէս: Կարտած ճամբորդը գրկում է նրա հոգն ու քարերը:

«Կը փարիմ, կը դրկեմ, կը պազնեմ, կը սթափիմ, և այլ աչերս չվերցուցի կրկինը: Երկինքն բարձր փառք մը դասած էի: Աչքս ի ծովն, միշտ ի ծովն շեշտ ի ծովն»: Բայց տխուր է ծովը: Որբացնում է Ծնորհակու հայրենիքը: «Մով, դու է՞ր չես ձիճաղեր»:

«Քաներ կորոնեմ յուր մեջ, չցուցներ, հարցումներ կրնեմ իրեն, չպատասխաներ», որովհետև նա կորցրել է իր «Երբեմնի դավկընները»: Հայրենի հին հիշատակների լուռ ու տխուր հայրեցվածքը Սրվանձառյանի աչքերից դառն արցունքներ են քամել, որ մեջ արթնացած ազգային զգացմունքները նա գրի էր առնում թախած արցունքներով: Համբույր ապով զբարերուն, հողերուն, փլատակաց փրա բուսած խոտերուն», նա դիմում է լեռներին ու ծովակին, որ արձագանք են տվել «Երկնային այուղ» ներսես Ծնորհակուն, ջրերին ու թռչուններին, որոնք շարժել են բանաստեղծի մտքի քնարը, աստղերին ու արեգակին, որ

1 Նույն, 1, Գ.
2 Նույն, 1, Ե.

զայտառ և շքեղ ճառագայթներով ոչև-
փորած են Վերափոս լուսո, արեգակն ար-
դար, առ իս լույս ծաղյազ գեղեցկոյին՝:

Ինչ ցամաքը շիրտ, հալք մը կը տես-
նեմ, սեփորակ փետուրներով, բարակ
վզիկով, դրոսակ գլխով, որ ծածկ էր
մեկ քով, թխորակ աչքերով, սպիտակ
լանջով, ծնկները ծայած ջրայն այրաց
վրա կերերա, սպափորի մը կամ անդին
կորուստ ունեցողի մը կը նմանի, բը-
նության և առաջնայան բոլոր դեպեց-
կությանն ու զվարթությունը իրեն
վրա չաղցեր, անփույթ հյուսացք մը կը
ձգէ աչքի ծայրով գեղցի ի մեկ կրքի-
մըն: Մինակ է ինքն բոլորովին: Հան-
կարծ ծովու ճառակը կիջնէ, կանճե-
տանա, խորերը կը հուզէ, և աճա ջը-
բույն կրեծը կերնէ պարտազ և սեճայն,
միևնուցիկ ախուր ախպով ու ելիր-
քով:... Ի՞նչ կարոնես, թե՛ղծ ճա-
փուկը՝:

Տեղացիներէից լսուեմ է, որ այդ հալքու-
կի անունը Թորոս Աղբար է: Դառնալով
նրան, ասուեմ է.

«Այ Թորոս Աղբար, որ կհուզես ծու-
փուս խորերը, կհուզես անդունդնե-
րը... ս'ը մեկ կորուստներդ կը խընդ-
րես... Լեյոնյա՞նց, Եթէ Երեսխոյանց,
Հեթումբա՞նց, Եթէ Գրիգորիսթանց,
խո՛ւշրն, Եթէ սաղատարան... գրո՞ւ-
մըն, Եթէ դրոշակն... վկայութիւն
բուրժանն ու ազնիւամաս՞ոյցն, Եթէ
Թորոսի ոտըն փրիճուց:

Է՛յ, Թորոս Աղբար, թո՛ւր ինձ Հեռ,
Թո՛ւրց դեկ տանիլ հայրենիքիս ևե-
սացյալ Հայսց ի անս, ի Խույզ, ի
Խույս... Թայց դու կը մեղմեո, ճես
համազվիլ, և ոչ տեղիդ իլլ-րամնդիս:
«Այդ, դու սղիդ հս, Խուզի՛, իրնդ-
րի՛, տոսի՛, ա՞յց տեճ. կարուսար՝
կորոված տեղը՞» (Բնդգծումն իմն է
Վ. Բ.):

Սիմ'ենն Երեմյանն այս կտորը համա-
բուեմ է Արժանձայանի Հայրենասիրական

խոշորացույցը, ամեւադնելով, թե ճատկե
կարելի է Թափանցել անոր հափշտակած
սողաակը սրտին մեջ: Սիրտ մը տաք ու
բարախուն Հայաստանի ամերակներուն՝
ճաղիկներուն և թաշուններուն համար, և
ամենեն ամելի գնահատելի է այդ սիրտ ան-
կեղծությունը, որ կրկ մը, սրտողբով կրկ
մը կարժէ...:

Արժանձայանի սպիտակությունները,
իշուկն և մյուս գործերը, շատ բարձր են
գնահատելի: Գարնայանը, Ա. Արփիա-
բյանը և Ծերեկնը: Նրանք Արժանձայանի
մեջ աւանտն են սնկապղպախ սեր գեղցի
հայրենի երկիրն ու նրա գրականությունը:

Գրախոսելով «Թորոս Աղբար»-ի երկու
հատորները Ծերեկնը գրում է, թե «Հայ-
րենի երկրին, նորա ամերակաց, նորա ժու-
ղովրդաց, նորա սրտավայրից, նորա հիշա-
տակաց սկարսզրաց մեջ հինք նորին Հեռ
գիտե ճիշտ բազապրել, յուր գրչին տակ
սճեն նկարապիւր կենդանի պատկեր կգաս-
նաս»:

Ինչ-ինչ պատճառներով «Թորոս Աղ-
բար»-ի Բ. հատորը յայտ տեսով հինդ տա-
րուց Հեռու, «Համով Հասով»-ի Հեռ միա-
սին: Հինդ տարվա ընթացքում Գ. Արբ-
փանձորյանը գրական սրել, գործ շէր հրա-
տարակի: Բայց նրա գործերին ճանոթ մը-
տախարակները իրտվայցի կին, կրք գրում
էին Հեղինակին, «Երեմյանն սրացույցի մեջ
գուշակված ու գրված շկա Ձեր մեանելու
օրը»:

Այս պատճառով Հեղինակը պատրաս-
տեց և հրատարակեց այն ժողովածուն, որ
Հեռագարում գրական-բանահյուսական գո-
հարներին մեկը հանդիսացավ: Դա «Հա-
մով-Հասով»-ն էր, որ զժամանակս, նրա
փրջին գործը կարավ:

Ինչո՞ւ էր գաղաթել Արժանձայանի գր-
բիշր: ԱրտիՀեռու սրգեա թմեր սղցի տան
սղան և մշակը, ինչուկն, գրում էր նա,
սայցի փորելու, քաղհանք բնելու, սրտ
ջրելու, փլած պատեղը շարելու, խառնակ
ճամբայինը հարթելու, անպեռ բույսեր

1 Թորոս Աղբար 1, էջ 11.
2 Հուլիս, 1, էջ Է-Ձ.
3 նույն, 1, էջ Զ.

1 Ծրեմեն, «Գրադեա հայեր» 1, 1913. Վեհ-
սին, էջ 221, 222.
2 «Մեղու Հայաստան», 1888, № 37.

խառակերու, ցորեն հնձելու, ալյուր աղալու ծառայութեանց մեջ գտնուեցաւ, և տեղ տեղ ալ գլուխս կտարեցին, կուրծքս պատուեցին, սիրտս ծակեցին»։ Խոսքը այն շքեղանքներէ մասին է, երբ Սրվանձաբանը Պալասի պատրիարքարանի հրամանով քննչական պաշտօններով շարունակ գաղտնիներն էր մեկնում կնճառաւ հարցերը լուծելու համար։ Եւ արդարեւ, արդ պահի գաղտնական իրադարձութիւնները այն աստիճան խոռոնակ բնույթ ունէին, որ ճշմարիտ և ժողովրդական գործիչը պետք է հանդիպեր անասելի դժգոհութիւններէ։ Նա, ամուսանեալ լինելով, իր շքեղութեան պահին էլ, կարողանում էր ժամանակ գտնել իր ախրած աշխատանքով՝ ժողովրդական բանահայտութեամբ զբաղուելու։

Այնի առաջնորդական պաշտօնը թողնելով Սրվանձաբանը պատրիարքարանի հրամանով 1880-81 թ.թ. Վանի հայտնի սովի ժամանակ շատաւաճ էր հասնել իր ծննդավայրը, վասնզին համնելու և ճերմկութի մը ուժա շարժում ժողովրդին օգնելու համար։ Նրան օգնութեան էր կանչել իր ուսուցիչն ու ընկերը, իր ժամանակը հարկաւ շարժելով։ Նրանց ձեռք էին կարկանդակ վանի զավատի հայ, թուրք և այլ սովահար ժողովուրդները։

Այստեղ էլ Սրվանձաբանը լծուած է աշխատանքի և Հայրենիք հետ կարճ ժամանակում կարողանում կորստից փրկել ժողովրդին։ Նրանք ոչ մի խորութիւն չէին դնում յուրաշինների և ալլազգիների միջև։

Գ. Եպիսկոպոս Սրվանձաբանի քաղաքական հայրենասիրական աշխատանքը վաղուց հայտնի էր Օսմանյան կառավարութեանը։ Ուստի 1880-ական թվականներէ վերջերին, Սրվանձաբանը հեռացվեց Տրապիզոնի առաջնորդական պաշտօնից ու հայ ժողովրդից նրան մեկուսացնելու նպատակով աստիճան Պոլիս։ Նա այդ օրվանից ընդմիջաւ գրկվեց Հայաստան վերադառնալու իրավունքից, դառնալով Հայաստանի ամենապատիւ պատգուաւր... Պոլիսի իրեն

համար անհարադատ իրականութեան մեջ, ախտեղ, որտեղ ալլաւ անկարելի էր ճշմարտ հայտնի ծանուցանելը, որտեղ չկային ճշմարտեան շահն ու հատը, հաղն ու ջուրը։

Սրվանձաբանը զրուժ էր իր սիրելի ծննդավայրի այրող կարոտը։ Պանդխտութեան մեջ մենութիւնն էր նրա անբաժան ընկերը։ Իայց երկար շտեղծեց այս մենութիւնը, Մանր սպրումների և նյութական գրկանքների մեջ նա հյուսելուց և հիմնադրուցով։

Հայրենիքի այրող կարոտը օրտում, նա վերջին անգամ շնչեց շիրքած օդը և հանձնելուց այն հողին, որից երբեմն շտապում էր հեռանալ՝ մայր երկրի օդը ծծելու և թորոս Աղբարին բարեւ ստանելու համար։

1878-ի հունիսին Բերլինի Վեհաժողովից հրապարակուած Հայաստան վերադարձով հայ պատգամավորութիւնը։

Սիրոպական օրիննապիտի կողմնակից հայ գործիչներից շատաւաճը տեսնելով Վեհաժողովից ապականութիւնը իրենք ևս հրապարակութիւն ապրեցին։ Այդ հրապարակութիւնը համառարած բնույթ ստացավ հայ հասարակական մտքի մեջ և որպէս կապար ծանրորեն նստեց նրա ուրեղի վրա։

Ինչպէս տեսանք, Գ. Եպիսկոպ. Սրվանձաբանը առանձին ակնկալութիւն չուներ Սիրոպայից, իսկ հայկական հարցի վերջինից հետո նա հաստատապէս և անվերապահորեն կանգնեց հակադեմոստական պլատֆորմայի վրա։

Բերլինի կոնգրեսը նրա կողմից սուր ծաղրի ենթարկվեց, Եւ դա պատահական չէր։

Պատմական անցյալին և իր ժամանակի քաղաքական բարդ անց ու դարձին քաջաճանոթ լինելով Սրվանձաբանն ուրիշ ճամբա չուներ։

Նրա քաղաքական տեսադաշտում կարծես ուրվազծուած էին դերմանական վանդանքի այն ոճիքները, որոնք աշխարհի ու մարդկութեան միտքը պիտի ցնցեն իր մահից հետո։

1 Համով-Հատով. Գ. Պոլիս, 1884, էջ 8.

1914-1918 թվականներին գերմանական իմպերիալիստների՝ Զինգիդիանի այդ անարդ հեռուորդների թելադրանքով սուլթանական Տաճկաստանի դահլիճները ավերեցին ու բնաջնջեցին ամբողջ Արևմտահայաստանը:

Հայաստանը վերածվեց Գողգոթայի: Գերմանական վիճակագրի զոհ զնացին հայ ժողովրդի հարյուր հազարավոր լավագույն զավակները:

Հայ ժողովուրդը չի մոռացել այդ Գողգոթան:

Հայ ժողովուրդը չի մոռացել գերմանական բարբարոսների անլուր ոճրագործութունները, որ այսօր շարունակում են հիտլերյան ավազակները: 14 թվականի Արևմտահայաստանի բնաջնջումից մազա-

պուրծ եղած և այժմ Սփյուռքում ապաստան դռած հայ հայրենասերները ամեն կերպ օգնում են մեր պայքարին ընդդեմ ֆալստական հորդաների՝ հողմացրիվ անելու Ֆալիզմը և առհավետ ազատագրելու Ֆալիզմի զնդանում տնքացող բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

Սփյուռքի հայութայն քրտնաջան վաստակով կառուցված տանկերի շարասյուններով հայ ժողովրդի կորույթի զավակները՝ կարմիր Վարդանի ու արին Մուշեղի պանծալի շառավիղները այսօր Սովետական Միութայն փառապանծ Բանակի շարքերում մարտնչում են հիտլերյան հրոսակների դեմ և անթառամ փառքով պսակում իրենց ի փառս և ի պարծանս Հայ Ժողովրդի և Մայր Հայրենից Սովետական Հայաստանի:

Վ. ԲԴՈՅՆ.

ՎԱՏԻԿԱՆԻ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՂԵՐԸ ԿՈՄ ՍՈՒԼԹԱՆՉՈՋ ԱՄԻՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԵՃՈՒ՝

Թոքատցին 1566-ին (բառ նմանց 1567-ին) թողնում է Վենետիկը և իր տպագրական պարտակաները հետն առած դնում է Կ. Պոլիս: Օսմանյան ժալթաքաղաքըն առաջին նվազ չի ժպտում նրան. Արդարին ձերբակալում են ու նետում բանտ: Արքան ժամանակ է մնում նա կալանքի տակ, հայտնի չէ, Լրեում է ոչ երկար ժամանակ, զանակուղիքիցը հաստատելով իշխանութիւնը արձակում է նրան, որը և առանց դանդաղելու Պոլսում հիմնում է առաջին Հայկական տպարանը (1567)թ.:

Կ. Պոլսում սկսվում է Արդար Ամիրբեկյանի գործունեության երրորդ, իսկ տպագրական գործում երկրորդ շրջանը: Այստեղ նա «Սորվիբապի Առաքել արեղայի ձեռամբ» տպագրում է հետևյալ 5 գրքերը՝

«Փոքր Բերական կամ Այրեմարան», «1567 թ. Տոնացոյց», «Փառագիրք և Պատարապատմություն» 1568-ին և «Մաշտոց» 1569-ին, Վ. Չարդարյան հիշում է նաև Տաղարամի, իսկ Թևոզիկը՝ Պարգատոււար, թերևս անունների շիտթություն, որովհետև Արդարի Կ. Պոլսում տպագրած գրքերի թիվը ամենքի մաս էլ ինչ չի անցնում: Մարդիկ դպիր Ճեմաճիրճյանը իր ժամանակագրության մեջ Տոնացոյցի մասին սուսպես է գրում:

«Նժժե. ի Կ. Պոլիս խոր ստամբիայ դիր սահմանեցին... ձեռամբ խորվիրապցի Առաքելայ արեղային, արհեստագործութեամբ Արդար դպրին և իւր Թագադարս Անտոնիոս Սուլթան սարկուսաղին, որոյ գրութն արպեսայ Տոնացոյցս առաջ բերին (յիշատ. 282)»:

Արդարի որդու այստեղ հիմնելը չէ պետք է առիթ, առ կարծելու, որ նա նույն

պես Պոլիս է եկել, որովհետև ինքը Սուլթանյանն իր համար վկայում է, որ հորը մեկնելուց հետո շարունակել է մնալ Հոռոմում: Արդարի Կ. Պոլսում հրատարակած գրքերը տպագրական արվեստի տեսակետից թույլ են իհարկէ, որիչ կերպ էլ լինել չէր կարող: Ինչ էլ սր լինի, Արդար Թոքատցին կույսուբական մեծ դործ է կատարել իր ժամանակին հայ տպարանական գործի ասպարիզում և իրենից հետո դրեթէ, ամբողջ մի դար նա չի ունեցել իր հետեւորդը Կ. Պոլսում: Երեմիա Չելեպի իր ժամանակագրության մեջ պատճառը համարում է «աղիտութեան և նախապաշարման» Արդարու և յուր գյուտին դեմ հանած հայածանքը ու ինչպես եկեղեցական իշխանութեամբ դանդաղ իրապանելու ջանալը» (Չարբ. 278): Արդ դեռ 1512-13 թվականներում տպագրված գրքերը երևան չէին եկել, Արդարը համարվում էր առաջին հայ տպագրիչը. վերջին տարիներս այդ պատիվը վերացավ իր վրայից, համենայն դեպս մնալով հայ տպագրության պատմության մեջ մի պարծառ դեմք:

1569-ից հետո այլևս դադարում է Արդարի տպագրական գործունեությունը, ինչպես նաև առհասարակ նրա անվան հիշատակությունը. Հաստատապես հայտնի չէ դատնում, թե Թոքատցին Կ. Պոլսից մեկնել է իջմաճին իր պատգամավորության և՛ կատարած աշխատանքների մասին դեկուցելու Միքայել կաթողիկոսին, թեկուզ տարիներ անցնելուց հետո:

«Հիշատակարանի» հեղինակը, մեզ հայտնի չէ ինչ աղբյուրներից առնելով, գրում է, որ «Արդար Կ. Պոլսեն կանցնի իջմաճին (1569-ին) Միքայել կաթողիկոսի»:

1 Սիկորոս անս «Իջմաճին», փետրվար—մարտ, 1914:

սին զով, ուրիշ վերջ ս'եր և ինչ լլլալու մասին սրեկ ծանոթություն կապահարձ: Օրմանյանը, երևի չիմք ունենալով այս աղջուրը, հավանական է դտնում, որ Աբ դարը «իբ տպարանին կազմվածներով փխաղբված լլլա կջմիածին», սակայն հարցը թողնում է ենթադրական վիճակի մեջ, քանի որ կջմիածնում այդ ժամանակ արպադրություն դոյություն ունենալու մասին ոչ մի վկայություն չկա: Վերջապատումին հեղինակը անտես աննելով Աբդարի սրազամալորության իսկական, քաղտքական նպատակը, գտնում է, որ ճասանց անոր (այսինքն ճապարանին կազմվածներով) դժվար կլլա մեկնել (անոր) կջմիածին երթալուն նպատակը: Իսկ քանի որ մեր այս հոդվածի նյութն է կարծում Աբդար Ամիրբեղյանին ներկայացնել ոչ որպես տպագրիչ, այլ քաղաքական դործիչ, մենք դառնանք նույն խնդրին, երբ թոքատցին դեռ Հումումն էր տպագրության գործն սկսելուց առաջ:

Վատիկանի դիվանադիտական խաղերը մենք մի քիչ այլ կերպ ենք հասկանում, քան Աբդար թոքատցու առաջնություն մասին մինչև այժմ գրողները (Չամչյան, Գարհանարյան, Լեո, Սյունյան, Չարգարյան, Քեռիկ), սուտի թող թույլ տրվի մեղ փորձել քաց անելու թիակաղծերը:

Եթե Սերաստիայի գողովը և ինքը Միքայել Սերաստային իմենց դիմումներով, թեկուզ Հայոց եկեղեցու անկախության կորուստի զնով կամեցել են Պիոս IV-ին սիրելի դառնալ և դրավելով իրենց կողմը բարակիսներու արշավանքը կազմել տալ Արևելքի դեմ, ապա պապը չի հավատացել նրանց երկգլխի թղթին և ցանկացել է Հայոց կաթողիկոսին բերել տալ Հոռոմ, անձամբ ճնշում գործ դնելու նրա վրա և վերջնականապես գլուխ բերելու եկեղեցիների միացման հարցը: Պիոս պապը Սուլթանյանին ոչ թե որդեգրել է իսկապես, այլ սրահել է պատանդ, որ Աբդարը իր բոլոր աղբեցությունը գործ դնել Միքայել Սերաստացուն Հոռոմ բերելու համար: Ինքը Սուլթանյանը չի թաքցնում, որ քանի որ պապը «չի թողել» իրեն հոր հետ վերա-

դառնալու, այլ սրահել է իր մոտ: «Սի դիս ս- փափն որդեգր աննելով իւրն ոչ թուղուլ ընդ հորն իմ ի պատճառս ի յետ չոքելոյ հոր իմո ի Հայոց»:

Նոր հավատացյալներ դրավելու մարմանով բռնված ճարպիկ դիվանադետ Պիոս IV-ը նույնիսկ հասկացնել է տալիս Աբդարին, որ եկեղեցիների միացումը գլուխ պապը հետո նրա «թագազարմ» որդին՝ Սուլթանյանը, կամ նոր անունով Մարկանտոնը կարող է նույնիսկ թագավոր դառնալ Հաստատանին, այլապես ինչ է նշանակում «փախի՛ն Փիոս արար համարումար հանդէս և առաջի խուտն ամբոխին համբուրեալ զերեսս Աբդարի, ապա թի ի Հայոց թագաւորն դտի ոմն մի», կամ «թագաւորայն է և արժան է սա փառաց և պատուոյ և կամ «թագաւորայն եկիր առ իս և այժմ» փառաւորեալ իբրև արքա առաջն զբեղ առ պատրիարքն, զի բերցես նմա քո մեզ» («Հիշատակարան»):

Պիոս IV-ը հոգ է տանում և իր «որդեգրի» կրթության մասին, Մարկանտոնը նախ զպրատանը», ապա և «հոյ կարգի նախնի ճեռաց ներքո» սովորում է լատիներեն և այլ ուսմունք, առատ նվիրատվություններ է ստանում վատիկանի դանձարանից և ինքն էլ իր կողմից օղնություն հասցնում Հումում իրեն դիմող ճարպային անանկներուն և կարոտյալներուն: Սակայն ոչ պապը և ոչ Սուլթանյանը այնքա չեն տեսնում Աբդարի երեսը: Երեսով Պիոս IV-ը մեծանում է և նրա տեղ կաթողիկ եկեղեցու քահանայապետության դահը, ինչպես վերջիվում առացինը, դրավում է «մեծ ինկվիզիտոր» Պիոս V-ը:

Նոր պապի օրով «թագաւորացն» Մարկանտոնի դրությունը ոչ միայն խախտվում է Հոռոմում, այլ և դնալով ալելի ամբանում և բարձրանում, նրա համար նույնիսկ արտոնյալ վիճակ է ստեղծվում և կոչվում է նաև «ճոլի» Հայոց: Սակայն այս պապն էլ երկար չի ապրում, 1572-ին նրան հաջորդում է Գրիգոր XIII-ը:

Հոռոմեական եկեղեցու դահակայների այս հաջորդականության ժամանակամիջյում մեռել էր նաև Հայոց կաթողիկոսը՝

մեղ ճանաթ Միքայել Սերատացին (1576) :
Նրան հաջորդել էին ուրիշները :

Իսկ ինչպիսի՞ էր նույն այդ պահերին
Թուրքիայի և Իրանի քաղաքական կայսու-
թյունը, նրանց փոխհարաբերությունը : Ի
վիճակի՞ էին արդյոք եվրոպական պետու-
թյունները, և թե նույնիսկ կամենային ու-
ժի գլխել և կրեկլիքի դեմ մի բան շահելու
համար :

16-րդ դարի կեսերին Սուլթանն փա-
ռահեցի որով Օսմանյան կայսրութայունը
դարձել էր այնպիսի հզոր պետություն, ո-
րի հետ կցանկանային դաշն կնքել եվրոպա-
յի պետություններից շատերը : Թուրքիայի
բանակը ամենից ավելի զորեղ սազմական
ուժով էր ներկայացնում եվրոպայում :
Թուրքիային էին սրտականում հունաստա-
նը, Բուլղարիան, Հունգարիան, Ղրիմը, Սի-
բիան, Պակստանը, Միջագետքը, Արարի-
ան, Հյուսիսային Աֆրիկան-Եգիպտոսի,
Հետ : Սակայն երկար ժամանակ շանցած,
Սուլթաննի ժառանգների Սեյիմ Ա-ի և Մու-
րադ III-ի դահակայություն ժամանակո՞ւմ-
յոցին ներքին և արտաքին մի շարք հան-
գամանքների պատճառով Օսմանյան պետու-
թյունը սկսել էր թուլանալ և կորցնել իր
երբեմնի փառքն ու քաղաքական հզորի-
կությունը :

Իրանում շահ Թամազը Ըն տարի թա-
ղապորեղուց հետո 1576-ին մեռել էր, կամ
ավելի ճիշտ սի բողոքիս խեղդեալ էր,
ինչպես վկայում է Պարսիկա պատմիչը :
Կարճ ժամանակով նրան հաջորդել էր իր
որդին Հայդարը, նույն օրն իսկ սպանել
ապով իր կյուրըր՝ Իսմայելին, սակայն սա-
կ էլ մի ատրի-կես թաղապորեղուց հետո
նույնպես խեղդվում է, իր տեղը առյույ
Թահմաղի ավսոյ սրդի Մահմեդին : Սգտվե-
լով Իրանի այս խառն գրությունից Օսման-
յան բանակը Լայա փառաքի դիսպարու-
թյամբ կսվի է դուրս գայիս և 1578-ին մեծ
հաղթություններ ասնում, գրավելով Հյու-
սիսային Հայաստանը : Թուրքիային են մե-
ացվում Արարատյան դաշտը, Էջմիածինն ու
Երևոլանը, սրանցից նույն պատմիչի առե-
լով Լայա փառքն զգերեաց 60-000 անձինաց :

Այսպիսի իստուաչիոթ ժամանակում

Հուսի պատը և թաղապորազն Սուլթան-
շահը չէին դադարում փառիայելու զա-
յաստանի վերկուխյան իրենց դաղապարը :
մի վերկուխյան, որ և թե նույնիսկ զլուխ
դար, այդ բանից ամենից ավելի պիտի շա-
հեյին ինքը վատիկանը Հայոց Եկեղեցին
կույ տայով, և Սուլթանշահ Մարկանտոնը՝
իր փառասիրական ձգտումներին հասած ի-
նչույ :

1570-ականների կեսերից նորից կենդա-
նություն է ստանում այդ պարսիկ խնդի-
րը : Վերիդար ժԳ. շ, զրում է Սրմաբանը,
զբուռն կերպով կաշխատեր Արեվելցիները
և մասնավորապես Հայերը հոտահաղափա-
նություն շահելու և ասոր համար ամեն տե-
սակ հրատարիչ միջոցները մեռք առած
էլ : Այդ պահերին՝ 1575-ին Կիլիկիայի
Հայոց կաթողիկոսը՝ Սաչատուր Երամբուր
մի դրամար պիմում է անում Գրիգոր XIII
պապին, խնդրելով ավանդել ՎՄ. Սիոնի
վերկուխյան : Որպես հասուցում այդ ա-
ջակցություն, Պատմյա Սաչատուրը պապին
տվանս էր ապրիս Եկեղեցիների միացման
իր համաձայնությունը :

Կիլիկիա, նոր խնդիր, նոր երկրա-
մաս : Գրիգոր XIII-ին չէր կարող հայտնի
չլինել, որ ուղիղ երկու դար առաջ այնտեղ
կար հայկուկան քաղաքայություն, որ ա-
վելի վաղ, իր նախորդներից Կեղեկոմիսս
և Ինտրևնտիոս պապերը մոտ հարարերու-
թյան մեջ են եղել Հայոց թաղապորների
հետ, այստիևացրելն նրանց ու օգտակար
դարձրել իրենց խաչակրաց արշավանքների
համար : Ահա արևմուտքում բողոքականու-
թյան տարածումով իր թուլացող հեղինա-
կությունը արևելքում բարձրացնելու հա-
մար ներկայանում էր մի նոր առիթ, որը
պետք էր օգտադործվեր, թեկուզ վատիկա-
նի միջոցներն ուժեղացնելու համար : Այդ-
պես է եղել և անցյալում, ինքը Լուսինը,
կրք տեսել է, որ զերմ. իշխանները իրենց
զոտիպականությունը հետևում են պապե-
րին, Հարանել է այսպիսի միտք. ճինչպես
որ պապը մինչև այժմ թուրքերի դեմ պա-
տերազմի ու կամ մեղքերի թողություն պա-
տրվակով փող էր թաղանում գերմանական
երկրներից, այնպես էլ իշխանները պապի

օրինակով այժմ ուզում են մեզանից փող կորզել:

Անցնում է երկու տարի, Էջմիածնից Իսախան է հասնում Թաղևոս կաթողիկոսը, բայց ինչպես է լինում, որ մի քանի ամիս վենետիկում մնալով, չի գնում Հոռոմ, այլ Լեհաստանի վրայով վերադառնում է Վաղարշապատ: Պապին այդ բանը դուր չի գալիս. ինչպե՞ս թե, ինքը դիշեր-ցնդեկ մտածում է հայոց ազգի բնույթը և մարմնի փրկութեան համար, իսկ ամենայն Հայոց կաթողիկոսը գալիս է մինչև Վենետիկ հասնում ու չի բարեհաճում այցելել Հոռոմ և ընդհանրապես իրեն:

Եվ ահա Գրիգոր XIII-ը 1583-ին ուժեղացնում է իր դարձումներու թափը. նա մի կողմից հատուկ պապականություններ է ուղարկում Կիլիկիա, Ռաշաոսը կաթողիկոսի հետ տեսնելու և բանակցելու համար, մյուս կողմից իր մոտ է կանչում Վաղարշապատի թեմայի թեմակառուցիչ Սուլթանյան Ամիրբեդյանին և խոստանում նրան զբաղաբեղուն բերքեր, և թե նա շտապ կերպով կարողանա Էջմիածնի կաթողիկոսից բերել առ կարևոր պաշտոնական թուղթեր կնքված և երդումով հաստատված:

Սուլթանյանը Թաղևոս կաթողիկոսին նույն թվի նոյեմբեր ամսին գրում է մի ընդարձակ նամակ, որի մեջ աղերսում է ուղարկել իր արքայազարմ լինելը հաստատող մի պաշտոնական վկայագիր, վավերացված կաթողիկոսի և քսան ևզիսկոպոստերի կնիքներով և մատների հղումով: Նամակը տանելու և ցանկալի վկայականը բերելու համար նշանակվում է հատուկ պատգամավոր, որը լիազորված էր նույնպես, եթե հնար է Հաբոց կաթողիկոսին հրավիրելու Հոռոմ: Ամիրբեդյանի գրությունը, որը շուտանկար նամուրթյամբ սուղորված է Վ. Չարդարյանի Հիշատակարանի մեջ (Ա. 266) խիստ հետաքրքրական է և պարունակում է մի շարք կարևոր տեղեկություններ թե իր և թե իր հոր մասին. մեք այստեղ առաջ կբերենք նամակի մի այն պիտիվ մասը, որը վերաբերում է բուն խնդրին:

«Նա ես առ սնա ի դարձառանս ձե-

սամբ հզար կարտինարաց և ամենայն դարձում թեմայի Վանթապոս... առաջի մե՛ն և Երևելի Սանթապոս վերին կարտինարին, որ է առաջիկայ Ս. Փափուն ժԳ. Գրիգորին, և... և վասն դարձում նորա խ Հոռոմ և դանալ սահար ի դրանց նորա և զվկայու թիւն որ վկայեալ էին թէ թաղաւորապէս... լով գայս ըստուգեաց և յարոնեաց Ս. Փափուն, և փափուն կամեցաւ տալ վնճ մտանդուլութիւն իբր կամ զբաղաբե կամ դրերդո և... լով իբր թէ նոր խն վկայութիւն խնդրելով ի Հայոցն: Եւ ոչ թէ ինձէն ժառանգութեան փափաքիմ, այլ ըստ վերաբերելոցն որ վասն Հայոց... գայս վասն այս պատճառացս առաքելցի դայս սիրելին իմ և խորհրդակիցն իմ առ հոգևոր Ս. Հայրութիւնդ քո զի գայսմանէ լուսն արացես ինձ, զի ձեռամբ քով դրեսցես նոմայ վկայութիւն առաջի դրոյն որպէս աստ ընթեռնուս, և կնքեսցես զնա կնքաւ քո, և թէ հնար է մինչև քսան Եզիսկոպոստեք կնքելով և ձեռնադիրս անել ի նոմայս դոր հարդ Սուրբ ինձ շնորհէ, և զփափաք իմ ի քե՛ն... ալ կամ իմ այնպէս արացես. Տէրն վիճա լըջ՛ այսմ բանիցս, զի ինձաւ Ս. Փափին ամ յամի անպակաս պահել հոգա...

Ի Ս. Էջմիածնէն և-ր... նորա: Եւ զարձակ թէ ոչ վասն իմ փափաքիմ, այլ վասն Հայոց երկից պատճառաւ նախ զի ամենայն կարթոսեալս ար դան առ իս քնակեցուցից զեկեղեղիս Հայոց և բարձրացուցից... ի մէջ ազգիս այս և կացցեն ի յառանդա իր բանց... որպէս յախտեանկան, և մի ոք յազգիս յայսմանէ... ցուցանէ և միայլայլէ դնուս, երրորդ՝ զի յորժամ այս ամենայն լինի հոշակի և սարածի արարունք Հայոցն յունկս ամենայնի, կարացից Կամարձա-ինցայց հանապազօր յիս և ի մուսս առ Ս. Հայրն Փափն և առ հզօր կարտինարքն և զդուշացուցանել... զառաջին երդումն և դաշինքն և յօժարեցուցանել դնուս օր ըստ օրէ դալ նոցա ի փրկութիւն Սրբոյն Սիոնի որպէս հարբն իմով ոչ եղև, մայթիմ և հայցեմ յլատուծոյ զի ձեռամբ իմով եղև զի Եւ դու, հայր իմ հոգևոր, Տէր Թաղևոս Պատրիարք, յօժարիս որպէս որդոյ հարգատոյ արացես ստուգութեամբ և հան-

ճարիւ և առնթեր նամակին զնկիով զկնի-
 քրս ճիւհամուտ Եսրիսկոպոսացն և զմա-
 տունս իւրեանց ի նկրքոյ կնքոյն և խոստո-
 վանաբարք... և ճի իրրև արակ... և փոյթ
 առ փոյթ կատարեացես և դարձուցես
 զպատգամաւոր... զի զոյթ հայրութեանդ
 տեսից ծառայք և հողեւոր որդիդ քո զի և
 եղէց անդիւնաքար ի մէջ Հումայ և ի
 մէջ... Եւ ետ այսոց կատարելոց թէ մի
 ի սպասաւորաց հօրդ հողեւորի Ժամանեցէ
 աստ առ ի խնդիրս ինչ տեսցէ... և քո
 զայտանանդ նայէի զի հարց սուրբ... ի քէն
 իսկ վկայէիր բերան առ բերան և հաստա-
 ակիր ձեռամբ քով և ...բարկաւ քով սրբ-
 րով... և դեր եւս այսպէս ակն ունիմ, և
 թէ ի Ժամանակիս չունի փառաւորութիւնդ
 կամք Ժամանելոյ աստ, որպէս եւս ի խըն-
 դիրս է մերոյ Հայոցս Պարոն կարտինարին
 զորոյ զնմ... ի դարձ պատասխանաւ թրդ
 տիւ ինձ թէ... պատրաստութիւն առնեմ
 Սրբութեանդ և կամ... քեզ կամ ճանապարհ
 հաւ դալոց ես, զի առաքելից ամենայն...
 հրաման կարտինարին զի յո՞ր քաղաք հան-
 դիպեցցի Սրբութիւնդ քո, ըստ արժան-
 եացն... ի քաղաք, ի թագաւորէ առ թագա-
 ւոր մինչև մոտեան յեցիս մեզ, ապա մի ի
 սպասաւորացդ առաքես, որ նս ամբոխիւ
 ըստ արժանի ելանել առաջի և զօրինաւորն
 տոնեմ զի ծանիցեն, ... թէ մարդկան...

վեհ իմաստութեանդ Հայր իմ հողեւոր Տէր
 Թաթէոս Պատրիարք-Հայոց:

Գրեցաւ ի Թուականութիւն Հայոց մե-
 ճաց ի ՌԼԲ ի ՄԼԾՆ Հում ի դուռն զլիա-
 ւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ձե-
 ոամբ Հոկտեմբեր ԻԱ օրն շարաթ օր:

Վերստացեալ
 Մեղաւօր
 ՍՈՒԼԹԱՆՇԱԷ ՍԱՐԳԱՆՅՕՆԷՍ

Սուլթանշահի այս նամակը, որ մինչև
 հիմա էլ իմամքով պահպանւում է Կ. Պոլսում
 Անտոնյան Միաբանութեան գրադարանում,
 ինչպես երևում է կես ճանապարհին է մնա-
 ցել ի չի հասել կնքմանին: Եւ ի մեծ վիշտ
 պապի և շարքայազն Մարկանտոնի մի քա-
 նի յամիս չանցած մետնում են թե Թադեոս
 Բ. Վաղարշապատցին, թե Պաշատուր երա-
 ժեշտ կաթողիկոսը և 1585-ն ինքը մտորին
 սրբութեանդ զորդիդ XIII-ը:

Այս ամենից հետո մենք նորից մի ան-
 դամ չկրկնենք վերեւի խոսքը թե ճամենայն
 ինչ վասն չկամելոյ աստուծոյ ունայն և
 սնտոսի եղև:

Մնում է Արար Ամիրբեդյանի համար
 հիշել լատինական հին առածը. «Այոպես է
 անցնում աշխարհային վաստքը»:

Գ. ԼԵՍՈՆՅԱՆ
 (Աւգիստի վաստակավոր գործիչ)



ՄԵՐ ՄԻՋՆԱԿՈՐՑԱՆ ԳՐԻՉԻՆԵՐԸ 1

Գրիչներին վրա ծանր տպագրութեան են թողել հաճախակի կրկնուող համաճարակները, «ճանտարածամ»-ները և մյուս բնական պատահարները:

1549 թ. գրած մի հիշատակարանում համաճարակի մասին հետևյալն է արձանագրված. «Եի թուականիս Հայոց, որ էր 222 1548 ամի, որում ձղեւ մահտարածամ աշխարհիս Հայոց. եւ շատ տունն աւերեցաւ, և և շատ ապրանք անտէր մնաց. դեհով ոչ խար մնաց, շատ դուրսն խափանուաւ, քանի հայր առանց որդի մնաց, եւ մայր առանց ցոտեր եւ ևղբոջր մնաց: Հէնց որ կալայ ժամանակն եղեւ, տղայ չկայր որ կհամս քչեր» (ՀԱՍՌ Մատեն. №554):

Ներկարար Եսային իր 1728 թ. գրած հիշատակարանում «ճանտարածամ»-ի վրէժանները հետևյալ ձևով է նկարագրում. «Եի ձձէ 1728. ևղև իխտ մահտարածամ, որ մինչև զից ամիս ոչ դադարեցաւ. շատ հայրք անորդի մնացին, և շատ մայրք անդուտոր մնացին, և շատ գրուեք փակեցան» (ՀԱՍՌ Մատեն. № 6433, թ. 217):

Մահտարածամից պակաս միտս չի պատճառել ևրկրաշարժը, որի առանձին դեպքերի հիշատակութունները հանդիպում ենք հիշատակարաններում: Ղուլօղլի Երզնկացին ևրկրաշարժի պատճառով թաղել է մորն ու տղային և իր խեղճութեան մասին հետևյալն է գրում.

«Մ՛, Ղուլօղլի Երզնկացի,
Թեղ ի եղեր լսել մի գիտմ,
Դու ես եղեր լսեղմ ու գերի,
Հողն ես գրել մայրն ու տղամ»:

Հիշատակարաններում գրիչները հաճախ դանդաղում են սովի, միան հասցը

բաժ մնասներին ե այլ բնական պատահարների համար: Այսպես, օրինակ, ՀԱՍՌ Մատեն. 2444 ձեռագրի ուսանալոր հիշատակարանում գրիչը հետևյալն է գրում.

«Եի թիւ հագոր Խարիւր վարսում,
Երկու անի ի հետ ի Ույն,
Սկաւ մարալս քաղում անկում,
Ի քաղաքին Երեւանոյն,

Մաքկեալ եղեւ երես օղոյն,
Սինդ երկնից իբրիւ գձիւն,
Թաւս իջաւ մէջ արտերուն.
Սկոտ աւտի իբրեւ գշուն:

Մահն եկաւ ի մայն տարին,
Հաւաւարեաց ամէն տեղոյն,
Խիտս կոտորեաց մամայ ու մեծոյն,
Փառս տացուք ի Աստուայն:

Սովն եկաւ ի մայն տարին,
Նաւն շախի եղաւ գային,
Սովն փարդեց դաշտոյ սարին,
Աստուած փրկէ կկող տարին:

Սովն եկաւ ի մայն տարին,
Հայոց դամբան յախիլս արին,
Խաւ չմնաց բնաւ ի սարին,
Ել շտեմեմէք այսպէս տարին»:

Մահտարածամ է նաև բնագծել մեր գրիչների ծայրահեղ համեստութունը: Երբանց հիշատակարաններում գուք երբեք չէք տեսնի, որ գրիչը շեշտ դնի եօի վրա և կամ, բնահանրապես, խոսի իր արժանիքների մասին և գովի իրեն: Բնահապառակը, նրանք թիջին դարերին հատուկ ձևերով դիմում են բացահայտ ինքնանվաստացման ե ինքնաստորացման: Հիշատակարաններում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դարձվածքների ինչպիսին՝ «եղկելի գրչապար», «բաղմամեղ մեղալորս», «չոզնամեղ ծրոզս», «անիմաստ տրուպս», «տուտանուն

գրչիս, Եփժուհիս, Եյոյլ և Ծոյլս և առն: Տասնյակ տարի շարունակ մարդը նստել, տքնել է մի ձեռագրի վրա, մարդկային համբերութեան և նստակեցութեան ամեն տեսակ սահմաններից դուրս, տառ առ տառ, կարեւր է ասել, ոչ թէ զբեւ, այլ նկարել է և ավարտել իր մարդարտաշար ձեռագիրը և վերջում գեւ Եփժուհիս և Եծոյլս է անվանում իրեն:

Ձեռագրերի հետ դործ ունեցող անձնագրութունը չի կարող պատկասանքով չըլցվել դեպի գրիչները, երբ ուղում է պատկերացնել այն խոշոր աշխատանքը, որ ներանք թափել են ձեռագրերի վրա: Նրանք ամիսներ, երբեմն անգամ տարիներ են նրստել մի ձեռագրի վրա, աչքի լույս թափել և մեծ համբերութեամբ ու խնամքով դրել են այն:

1248 թվին դրված մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչը նորմայ պարմաններում 32 օրվա ընթացքում, աշխատելով ամբողջ օրը, դրել է ընդամենը 93 թերթ, միջին հաշվով, օրական երեք թերթ (տե՛ս ՀՄՍՍ Մատեն. №1340): Մեր Մասենադարանում կան այնպիսի մեծածափալ ձեռագրեր (Էջալսմատուրքներ, Էջարանց վարքներ, Էճատրնտիրներ և այլն), որոնք գրվել են տասնյակ տարիների ընթացքում:

Մաթեյոս գրիչն իր 1378 թվին ավարտած Էջարանց վարքի հիշատակարանում հայտնում է, որ նա աթ ձեռագիրը դրել է յոթ տարվա ընթացքում: «... Եյոյնակի սիրով դրեցի դամս եօթն» (ՀՄՍՍ Մատեն. №2680):

ՀՄՍՍ Մատեն. №4472 ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչն իր ձեռագիրը դրել է հինգ տարվա ընթացքում. «Եւ յիսուսի է, զի օս սկսաք ՁԱ (901) թուականին Հարոց», գրում էր նա, «Եւ աւարտեցաք ՁԶ (906)»... Գրելու Ժամանակի երկարացման պատճառը մասամբ պիտի բացատրել քաղաքական անբարենպաստ պայմաններով: Այդ մասին հիշատակագիրը նշում է. «... զի յիշատակարանի հետ կարգի ոչ զնալոյն անձեղաղիք լերու՛ւք, երբ սիրտն մաշխույ լինի, սէքն լուս պակաս

կու հայի»: Հիշատակագիրը վերջում դառնացած ավելացնում է. «Մարդ դժարոյ ցաւ շլխոն՝ կէս դիչիքին մամ կու ձենէ»:

Մեր Մասենադարանում կան ձեռագրեր, որոնց վրա աշխատել է ո՛չ թէ մեկ, այլ մի քանի գրիչ: Սկսել է մեկը, բայց մահացել է և ձեռագիրը թերի է մնացել, երկրորդն է սկսել, մահացել է, դարձյալ ձեռագիրը թերի է մնացել. ք վերջապետ, երրորդին է միայն հաջողվել ավարտել ձեռագիրը: Եվ գրիչներից տմեն մեկը թողել է իր հիշատակարանը: Հիշատակարաններից երևում է, որ ձեռագրերը միջին դարերում բավական թանկ են զնահատվել: Նյութի զգվար ձեռք բերելու հանդամանքը և նրա թափած մեծ աշխատանքը սխալտակացնելը՝ և կոկելը՝ բնական է, թանկացրել է ձեռագիրը:

1668 թ. ընդօրինակութուն ունեցող մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ ձեռագիրը վաճառվել է Երկու Երան, երկու ձու և մեկ կովի: Հիշատակարանում ասված է «Երաճեալ յիշեցէ զզնոյ սուրբ աւետարանս»՝ զՄարչարիտոն, որ ետ երկու եղ, երկու ձի, կով մի եւ էսս յիշատակ...» (Արթիկի տվեալարանը):

ՀՄՍՍ Մատենադարան 212 (նոր ցուցակով) ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Երաճեալ յիշեցէ եւ Աստուած ողորմի առացէ Մուրատ Բաշխուն եւ հօրեղորն, Անդրէասին, որ տուին իւրեանց հալալ վաստակոցն կով մի՝ Ե է փափասի: Տուին, աղատեցին յանաբրինաց եւ ի զլրութեանց»:

Անհրաժեշտ է նշել, որ անցյալում մեզ մոտ ձեռագրերը պաշտամունքի առարկա են դարձել: Ձեռագրերի վրա նրանք նստել են ո՛չ որպես անշունչ մի իրի, այլ կենդանի էակի վրա: Հիշատակարաններում երբե՛ք չեն ասում՝ թե ձեռագիրը թալան տարան կամ ձեռագիրը թալանից աղատեցին: Ձեռագիրն, ասում են, զերի տարան, ձեռագիրը դերութունից աղատեցին: Մենք մեր Մասենադարանում ունենք ձեռագրեր, որոնք դերութեան մեջ են եղել մի քանի անգամ և դերութունից աղատվել են շնորհիվ առանձին բարերարների միջամտու-

թյան և նյութական օժանդակության: Մեղ
 ւասած շատ ձեռագրեր իր ժամանակին ա-
 սանձին համայնների, առանձին տոհմերի
 սեփականութուն են հանդիսացել և որ
 պես աջանդական սրբություն փոխանցվել
 են սերնդից սերունդ: Մենք փաստեր ու-
 նենք, որ մեր տանկահայ Լյութայրնկրն ա-
 սաջին իմպերիալիստական պատերազմի
 ժամանակ վախճելով կոտորածից, և բրեմն
 շխարհումնալով իրենց հետ վերցնել իրենց
 ամենամեծ քաղաքում ու թանկարժեք իրք,
 աշխատել են ազատել իրենց տոհմական
 սրբությունը՝ ձեռագրերը: Մի շարք աղբյու-
 րի ձեռագրեր են գրանցված մեր Մատենա-
 դարանի նոր ժողովածվում:

Հիշատակարաններում մեկ մեկ պատա-
 հում են և գրիչների կտակներ: Գրիչների
 առ կտակները շատ համեստ են, նրանք
 դալիք սերնդից շատ բան չեն խնդրում, նր-
 անք խնդրում են լավ պահել ձեռագրերը,
 չկեղտոտել և առ ու ծախի առարկա չդարձ-
 նել, նրանք:

Մարզար գրիչն իր 1701 թ. գրած հի-
 շատակարանում խնդրում է. «...դայս ա
 դերսեմ ի մեղապարտ գրչէս՝ լաւ ի միտ
 առնէք... դրոյս ինամ տանէք եւ յամենայն
 փաստակար իրաց պահէք դսա՝ ի հրոյ, ի
 ջրոյ, ի հիւթոյ, ի մոմ կաթելոյ, և ալ
 ամենայն փաստս պահէք սրբությամբ, եր-
 կու երեք լաթով պատեալ...» (ՀՄԱ Մ ա
 տեն. №33):

ՀՄԱ Մատենադարանի 2394 ձեռագրի
 տաղարանի գրիչը իր ընթերցողներին հե-
 տե լալ խրատն է ասելիս.

«Ո՛վ սիրելի եղբայր որ ես,
 Զայս քեզ խրատ տամ որ լսես,
 Յորժամ դատարան եղանակես,
 Զթուգարն թքով չապականես,
 Զկողն անողորմ յետ չի պարղես,
 Հանց որ կապին փաստ դործես,
 Կամ անգէտին ձեռն ղնես,
 Առդանաց մարդկան կոխան
 շինես...»

Ի սոզ պաթերն վայր չի ձգես,
 Կամ երկու մարդ լանես քաշես,
 Կամ ի վերան գիծի վաթես,
 Կամ ել և մոմ կաթելցընես,

Այլ յոյժ սիրով նախախնամես,
 Սրբեալ ձեռք, լաթով բոնես,
 Ի հրոյ, ի ջրոյ ի դատ պահես,
 Ի ի շորային տեղի դընես.
 Զմեղապարտ, զսիրտս չիչես...»
 (Թ. 4ք՜նա):

ՀՄԱ Մատեն. №5597 ձեռագրի հիշա-
 տակալիրը, ձեռագրից օգտվողներին դպո-
 շացնում է ուշադիր լինել «...յամենայն
 դժբաղաց դսա, ի ցեցոյ և ի կերչաց, և ի
 հիւթոյ, և յամենայն վատնողաց դվայել
 չութիւն դորա», և խնդրում է «միանգա-
 մայն եւ վերարկուածածկությամբ հոդ
 տարցես դժա՝ որպէս խնատուն վաճառա-
 կանն՝ պատուական մարգարաց»:

Աստվածատուր գրիչն իր 1674 թ. ընդ-
 օրինակած ոտանավոր հիշատակարանում
 հետևյալն է խնդրում.

«Ո՛վ դու մանուկ սիրող բանի,
 Յինէն պատուէր քեզ այս լինի,
 Յորժամ ընթերցման պատշաճ լինի,
 Խնամով բոնես եւ դդուշալի...
 Ի հրոյ, և ի ջրոյ, և ի կաթելիթի
 Ի ալ ամենայն անաշուր բանի»

(ՀՄԱ Մատեն. № 7046, (Թ. 366):

Գրիչների պատվերներից մինն էլ, լնչ-
 պես ասացինք, այն է, որ ձեռագիրը հե-
 տազայում առ ու ծախսի առարկա չդառ-
 նա: 1442 թ. ընդօրինակած մի ձեռագրի
 ոտանավոր հիշատակարանում, կարդում
 ենք.

«Իշխանութիւն ոչ ոք չունի
 Տալ դրուական վասն արծաթի,
 Կամ վաճառել ընդ քանքարի՝
 Զի է յազատ ամենայնի»

(ՀՄԱ Մատեն. № 82):

Կիրակոս գրիչն անիծում է բոլոր ձե-
 րանց, ովքեր կհանդգնեն ծախել, դողա-
 նալ կամ դրաւ դնել ձեռագրերը, «Մի ոք իշ-
 խեցի դսա ծախել կամ գողանալ կամ դրա-
 վել, և թէ ոք յանդգնի գողանայ կամ
 ծախէ կամ դրաւէ՝ դատարան Յուշայի առ-
 նու...» (ՀՄԱ Մատեն. №858):

Թե ինչպես են գրիչները նայել իրենց
 պրոֆեսիայի վրա և ինչպես են դնահատել
 ընդհանրապես իրենց աշխատանքը, այդ
 պարզ կարելի է տեսնել 1298 թվի Բասիլ

զրչի պրած մի ոտանալուր հիշատակարանից:

Հիշատակարանի սկզբում, Բասիլը հայտնում է, որ փող չունի որ քրիչներին պրել աւլ, տասի և ինքն է ստիպւած եղել զրել՝ «Քանքար չդոյր զի վարձէի»:

Մատամբ քանի՛ էս դրէի...»: Այնուհետև յարակուսանքի մեջ է լինելնում՝ թի աբլ ձեռագրերը, որ պրում է, ի նշ օգուտ սենի, երբ նրանք վերջին հաշվով իրեն չեն մնալու՝

«Յայս միջոցին (այսինքն պրելու միջոցին) անձն իմ կոծի,

ևւ վարանի յամենայնի՝

Թէ զի՛նչ օգուտ ինձ յայս ջանի՝

Որ քնթեոնուալ ինձ ոչ լինի...»:

Շարունակութեան մեջ հուսադրում է իրեն.

«Մի յայս միայն պերոյս թողի,

Թէ եկելոց վայել լինի...»:

Վերջում նա դիմում է դալիք սերունդներին և ձեռագիրը հիշատակ թողնում նրանց՝ «բարի վայելելու» համար:

«Թող դատու ցանկալի,

Ձկնի եկելոյ վայել բարի»

(ՀՄՄՌ Մատեն. № 418):

Շատ ժամանակներ են անցել ձեռագրերը գրելու ժամանակներից: Տղադրական անխնիկան փոխադրելու եկալ զքրիչներին և աստիճանաբար դուրս մղեց նրանց ապարելից: Սակայն եկող սերունդները զը-

րիչների ջանքերը երբեք մտացութեան շտտոնեցին: Այժմ Սովետական Հայաստանի մեր մայրաքաղաքում, Երևանում, որ կենտրոնացւած են աշխարհում մեզ հասած հայերեն ձեռագրերի կեսից ավելին, զըրիչների մեղ թողած ավանդները պահւում են մեծ խնամքով և ուշադրութեամբ: Ձեռագրի հիման վրա դիտական բաղմաթիւ հաստատութիւններ ուսումնասիրում են չին և միջին դարերի պատմութիւնը և մեծ շարիւղ օգտագործում դրիչներէ հիշատակարանները:

Ել ամեն անգամ մազաղաթի կամ խուչոցած թղթի ձեռագիրը թերթիկա մենք պատկառանքով ենք հիշում զքրիչներին՝ անցյալի մեր մտնենագրութեան այս վաստակալոր և մեղմաջան աշխատողներին:

Ել մեր ականջին շատ անուշ է հնչում ժողովրդական թե՛ բանաստեղծ ակադեմիկոս Ավետիք Իսահակյանի մեր պատմիչ-զըրիչներին նսիրած քառյակը՝

«Մեր հոյակապ հին փանքերի մութ խուցերում, մեռութեան մեջ,

Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի չուսով, անչեջ,

Մի նշխարով, մի կում ջրով և ճղնութեամբ զիշերն անքուն,

Պատմութիւնը մեր գրեցին մազաղաթի վրա դժգույն...»

(Ավ. Իսահակյան, Ընտիր Երկեր, I հատ. Երևան 1939, էջ 278):

ՊՐՈՑ. ԳՈՎՏԻԱՆ. ԱՅՐԾ. ՀՍ. ՄՈՍՆ
(Գերագույն Դեպարտման խորհրդի ղեկ. քարտուղար)

ՀՅՅՏԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԳՈՒՆՈՒՄ Է ՉՈՂԱՍՏԵՐ ՔԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՍՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՔԵ ՍՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՍՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԻՍՏԱՆԻ ՍՍՐ

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ, ԷՇՄԻԱԴԶԻՆ ԵՎ ՎԱԳԱՐՇԱՊԱՏԻ ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԷՆ

Армянская ССР, Вагаршапат, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazin „Echmiadzin“ Vagarshapat
Armenian, USSR.

